

**ՄԵՐ ԱՆԿԻԲԵՆ**

**ՇԻՋԵՑԱԻ  
 ԲԱՐՉՐԱՐՈՒԵՍ  
 ՎԱՍՏԱԿԻ ՏԵՐ  
 ԲԱՆԱՍՏԵՂՈՒԿԻՆ՝  
 ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ**

**ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Ոչ եւս է հայ մշակոյթի տա-  
 դանդաշատ, նուիրեալ ու անդուլ  
 մշակներէն բանաստեղծուհի՝ Սիլ-  
 վա Կապուտիկեանը:

Անոր կսկծալի կորուստը  
 կ'ողորան իր գերազանցապէս հա-  
 յարոյր բանաստեղծութեան երկր-  
 պագունները: Անոր դառնադէտ մա-  
 հը կը սգան անոնք, որոնք իր մէջ  
 տեսան իմաստուն, իրապաշտ ու  
 յանձնառու մտաւորակներ: Խորա-  
 պէս կը ցաւի նաեւ անոնք՝ որոնք  
 իր մէջ հաստատեցին իր ժողո-  
 վուրդի, հայրենիքի, ազգային դա-  
 րաւոր արժեքներու գոյութեան  
 պահպանման ու ազգային երազ-  
 ներու իրագործման դիրքերու վրայ  
 կանգնած մշտաբոլոր բանաստեղ-  
 ծուհին:

Կը սգանք եւ մենք, մեր մեծ  
 բանաստեղծուհիի մահը, եւ այս յու-  
 գիչ առիթով, մեր գգացումը ցա-  
 ւակցութիւնները կը յայտնենք մեր  
 բոլոր գրողներուն, անխտիր, եւ Հա-  
 յաստանի գրողներուն Միութեան  
 վարչութեան, մասնաւորապէս:  
 Մեծ էր Սիլվա Կապուտիկեան, իր  
 տաղանդով, իր ստեղծագործական  
 վաստակով, իր հասարակական  
 ծառայութիւններով ու իր մարդ-  
 կային հմայքով:

Անուրանալի է այն հանգա-  
 մանք, որ ի խնդիր հայ լեզուի պահ-  
 պանման՝ Սիլվա Կապուտիկեան, իր  
 յուզական՝ այլ ներգործող, բե-  
 լադրական՝ այլ ոգեւորող «խօսե-  
 րով», մայրօրէն հարագատ՝ այլ  
 բանաստեղծօրէն հոգեպարար ար-  
 ուեստով, աշխարհով մէկ տարած-  
 ուած եւ ձուլման վտանգի ենթա-  
 կայ հայ մանուկը, պատանին, եւ  
 երիտասարդը անհակտելիօրէն  
 շղթայեց իր մեարդպետ «մայր լեզ-  
 ուին», դեռ եւս դպրոցական գրա-  
 սեղաններէն շատ առաջ, իրենց մօր  
 սննդարար գրկին մէջ: Մեր սփիւռ-  
 փառայ շնորհալի արուեստագէտ-  
 ներուն յայտագրերուն վերին գլու-  
 իր կը գտնուէին անոր այն բանաս-  
 տեղծութիւնները, որոնք ընդհան-  
 րապէս կը յուշէին հայ լեզուն եւ  
 հայու ինքնութիւնը միշտ վառ պա-  
 հելու պատուէրը. «...Թէ մօրդ ան-  
 գամ մտքից հանես, Բո մայր լեզուն  
 չմոռանաս»: Նոյնպէս, ակնյայտ էր  
 այն իրողութիւնը, որ Սիլվա Կա-  
 պուտիկեան, իր կեանքի բովան-  
 դակ տեւողութեան, մնաց կողմին  
 սփիւռփառայ կառոյցներուն: Ան,  
 Սփիւռփառայ այցելութիւններուն,  
 կը հոգեկցէր հանդիպած ամէն հա-  
 յու, կազմակերպութեան, շարժու-  
 մի հետ: Կը բաժնէր անոնց բոլորին

**ԹՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՇԵՑ ԶՕՐՔ ՈՒՂԱՐԿԵԼ  
 ԼԻԲԱՆԱՆԻ ՅԱՐԱԻՆ  
 ՍԱԿԱՅՆ ՅԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԸՆԴԴԻՍԱՆԱԼ**

Թրքական կառավարութիւնը  
 Օգոստոս 28-ի իր նիստին որոշում  
 կաշարացուց զօրք ուղարկել Լիբա-  
 նան, այդ երկրի հարաւային  
 մասէն ներս տեղակայուելիք ՄԱԿ-  
 ի խաղաղարար ուժերուն միանա-  
 լու համար:

«Սկզբունքով մենք որոշե-  
 ցինք մաս կազմել ՄԱԿ-ի խաղա-  
 ղարար առաքելութեան», յայտա-  
 րարեց կառավարութեան բանբեր  
 ձէմիլ Չիչէք: Ան տեղեկացուց որ,  
 այս նպատակով պիտի դիմուի  
 Խորհրդարան՝ վերջնական հաւա-  
 նութեան արժանանալու համար:

Խորհրդարանէն ներս ընդդի-  
 մադիր կուսակցութիւնը հակառակ  
 է այս քայլին, որուն հակառակ է  
 նաեւ Թուրքիոյ նախագահ Ահմէտ  
 Նէճէտ Սէզէր:

Քաղաքական մեկնաբաններու  
 կարծիքով, Թրքական կառավարու-  
 թեան այս որոշումին մէջ մեծ դեր  
 ունի Ամերիկայի նախագահ Ճորձ  
 Պուշի վարչակազմը, որ ամէն գնով  
 կ'ուզէ տեսնել Թրքական մասնակ-  
 ցութիւնը ՄԱԿ-ի առաքելութեան:  
 Իր կարգին, Թուրքիա կը ձգտի  
 բարելաւել Միացեալ Նահանգներու  
 հետ իր յարաբերութիւնները, որ  
 պաղ շրջան մը կը բոլորէ Իրաքի  
 պատերազմէն ասդին:

Միւս կողմէ, Լիբանանահա-  
 յութիւնը ամէն մակարդակներու  
 վրայ կը շարունակէ ընդդիմանալ  
 Թրքական զօրքերու Լիբանան ժա-

մանումին դէմ:

Լիբանանի Խորհրդարանի Հայ  
 Երեսփոխաններ՝ նախարար Ժան  
 Օղասապեան, Տոքթ. Եղիկ ձէրէճ-  
 եան, Յակոբ Գասարճեան եւ Սերժ  
 Թուրարգիսեան Օգոստոս 26-ին  
 հաղորդագրութիւն մը յղեցին  
 լիբանանեան եւ միջազգային լրատ-  
 ուամիջոցներուն: Հայ Երեսփոխա-  
 նները պահանջեցին Լիբանանի կա-  
 ռավարութենէն նկատի առնել Լի-  
 բանանահայութեան փափաքը եւ  
 միջազգային խաղաղապահ ուժե-  
 րուն մէջ չընդգրկել Թրքական  
 բանակի միաւորները:

Այս պահանջը հայ երեսփո-  
 խանները հիմնաւորած են այն  
 հաստատումով, որ Լիբանան տար-  
 բեր համայնքներու գոյակցութեան  
 երկիրն է եւ բոլորը պարտաւոր են  
 յարգել իւրաքանչիւր համայնքի  
 իւրաքանչիւր իրաւունքներն ու զգացում-  
 ները:

Այս առթիւ հայ երեսփոխան-  
 ները լիջեցուցած են որ Լիբանա-  
 նահայ համայնքը կազմուած է 1915  
 թուականին, Թուրքիոյ կողմէ հա-  
 յութեան հանդէպ գործադրուած  
 ցեղասպանութեան հետեւանքով եւ  
 հայ ժողովուրդը Թրքական բանա-  
 կին հանդէպ ունի անվստահու-  
 թիւն:

Ուստի հայ երեսփոխանները  
 պահանջած են Լիբանանի կառա-  
 վարութենէն յարգել հայ համայն-  
 քի զգացումները եւ բազմազգեան

ուժերուն մէջ չներառնել Թրքա-  
 կան բանակի միաւորները:

Բողոքի յայտարարութեամբ  
 մը հանդէս եկան նաեւ Հայ ազգա-  
 յին երեք կուսակցութիւնները  
 յայտնելով, թէ միջազգային խա-  
 ղաղարար ուժերուն մաս կազմող  
 որեւէ ուժ պէտք չէ տազնապի  
 կողմերէն մէկուն կողքին ըլլայ,  
 մինչդեռ Թուրքիա թշնամանք  
 ունի բազմաթիւ երկիրներու եւ  
 ժողովուրդներու հետ եւ իր պատ-  
 մութիւնը կը վկայէ անոնց հետ  
 յարաբերութեան արիւնալի էու-  
 թիւնը:

«Կը վերահաստատենք մեր  
 ընդդիմութիւնն ու մերժումը հարա-  
 ւային Լիբանանի մէջ տեղակայու-  
 լիք միջազգային խաղաղարար ու-  
 ժերուն մէջ Թրքական ուժերու նե-  
 րառումին, եւ Լիբանանեան պետու-  
 թենէն կը պահանջենք չընդունիլ  
 այս ուժերուն մասնակցութիւնը»,  
 ըստած է ՍԴՀԿ, ՀՅԴ եւ ՌԱԿ  
 միացեալ յայտարարութեան մէջ:

Լիբանան զօրք ուղարկելու  
 հարցը օրակարգի վրայ ունի նաեւ  
 Հայաստանի կառավարութիւնը: Այս  
 կապակցութեամբ արտաքին գոր-  
 ծոց փոխնախարար Գեղամ Ղարիբ-  
 ջանեան «Ազատութիւն» ռատիո-  
 թիւնը

Շաբ.ը էջ 4

**ՎԱՍԱՆԱԽԱԳԱՆՆԵՐԸ  
 ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ  
 ՉՈՒՆԻՆ**

Մինակի Խումբի ամերիկացի  
 համանախագահ Մէթիւ Պրայզա յայ-  
 տարարած է թէ, Լեռնային Ղարա-  
 բաղի հակամարտութեան կարգա-  
 տրման յառաջընթացը կախուած է  
 Հայաստանի եւ Ատրպէյճանի նա-  
 խագահներէն:

«Մենք պէտք է հասնինք յա-  
 ուաջընթացի, բայց այդ կախուած է  
 այն բանէն, թէ ինչպիսի առաջարկ-  
 ներ կը ներկայացնեն Հայաստանի եւ  
 Ատրպէյճանի նախագահները: Ես կը  
 կարծեմ, որ կողմերը կը դիմեն  
 փոխզիջման, քանի որ այդ է խնդի-  
 րի լուծման միակ ճանապարհը»,  
 ըսած է Պրայզան, շեշտելով, որ  
 «հակամարտութեան ռազմական լու-  
 ծում գոյութիւն չունի»:

«Միջնորդներու ներկայացու-  
 ցած սկզբունքները կը մնան բանակ-  
 ցութեան սեղանին եւ այդ կարելի  
 է անուանել ճանապարհային քար-  
 տեղ»:

«Ատոնք են մեր ամենալաւ  
 առաջարկները», ըսած է Պրայզա:  
 Ան յայտնած է, որ մօտ ապագային  
 հարաւոր է հանդիպում Հայաստա-  
 նի եւ Ատրպէյճանի արտաքին գոր-  
 ծոց նախարարներու միջեւ:

Մէթիւ Պրայզա ընդգծած է,  
 որ թէ հայկական, թէ ատրպէյճանա-  
 կան կողմը հանդէս կու գան  
 խաղաղ կարգաւորման օգտին:

**ՎԱՅԱՍՏԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐԱԺԵՇՏԸ  
 ՏՈՒՄԻ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻՆ**

Երեքշաբթի,  
 Օգոստոս 29-ին հայ  
 հասարակութիւնը վեր-  
 ջին հրաժեշտը տուաւ  
 մեծանուն հայ բա-  
 նաստեղծուհի Սիլվա  
 Կապուտիկեանին, որ  
 վախճանեցաւ Օգոստոս  
 24-ին Երեւանի մէջ,  
 87 տարեկան հասակին:



Սիլվա Կապուտիկեան 1919-2006

Սպենդիարեանի  
 անուան օփերայի եւ  
 պալետի ազգային ակա-  
 դեմիական թատրոնի  
 շէնքէն ներս Ամենայն  
 հայոց բանաստեղծուհի-  
 ին իրենց յարգանքի  
 տուրքը մատուցելու եկան հազա-  
 րաւոր հայաստանցիներ, սփիւռ-  
 քահայեր, պետական եւ քաղաքա-  
 կան գործիչներ:

Ժամը 11-ին Կապուտիկեանի  
 աճիւնի մօտ պատուոյ պահակ կանգ-  
 նեցան յուղարկաւորութեան կա-  
 ռավարական յանձնաժողովի ան-  
 դամները՝ վարչապետ Անդրանիկ  
 Մարգարեանի գլխավորութեամբ:

«Կորուստը շատ մեծ է ոչ  
 միայն մեր գրականութեան, այլեւ  
 մեր ողջ ժողովրդի համար», -

ըսաւ վարչապետ Մարգարեան:  
 Կէսօրէն ետք ժամանեց  
 Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարե-  
 գին Բ. եւ հոգեհանգստեան կարգ  
 կատարեց:

«Երջանիկ էր Սիլվա Կապու-  
 տիկեանը, որ իր հոգու բոլոր  
 ուժերը ներդրեց մեր անկախ պե-  
 տականութեան վերահաստատման  
 սուրբ նպատակին, տեսաւ Հայաս-  
 տանի ու Արցախի ազատ կեանքը

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԲԱՇԽԵԼՈՎ ՎԱՐՅՈՐ ԶԻ ԼՈՒԾԻՈՒՄ, ԲԱՆԻ ՈՐ ՎԱՍԵԼ ԵՆՔ ՎԵՐՋԻՆ

Հայաստանի իշխանութիւնը շատ է սիրում խօսել տնտեսական երկնիշ աճի մասին, որն արձանագրուած է արդէն 6 տարի շարունակ: Դա իսկապէս տպաւորիչ ցուցանիշ է, քանի որ շատ քիչ երկրների է յաջողուած հասնել այդպիսի ցուցանիշի:

Բայց երբ փորձ է արւում, նոյնիսկ ոչ մասնագէտի աչքով դիտարկել Հայաստանի տնտեսութեան այդ վեցամեայ երկնիշ աճը, ապա այն ոչ թէ հպարտութեան, այլ շատ ու շատ մտահոգութիւնների պատճառ է դառնում:

Առաջին եւ ամենից կարեւոր փաստը թերեւս այն է, որ վեց տարի շարունակ մեր տնտեսութեան աճը կազմում է 11-13 տոկոս, մէկ երկու անգամ կամ պակաս տասնորդականներով: Այսինքն վեց տարի շարունակ մեր տնտեսութիւնը գրեթէ նոյն աճն է արձանագրում: Զարգացած տնտեսութեամբ երկրներում դա միանգամայն բնական երեւոյթ է: Իհարկէ, այդ երկրներում շարունակական աճը տեղաւորուած է միանիշ սահմանում, բայց դարձեալ մնում է կայուն վիճակում:

Թւում է, թէ Հայաստանն այդ իմաստով առաջ է անցել զարգացած երկրներից: Բայց իրականում գործ ունենք խիստ կառավարուող աճի հետ, կամ այսպէս ասենք, արհեստական աճի հետ: Կամ էլ, աճը բնական է, ինչը առաւել քան վատ է, եւ առաւել քան մտահոգիչ: Եթէ մեր տնտեսութիւնը արդէն վեց տարի շարունակ արձանագրում է գրեթէ նոյն երկնիշ աճը, ապա նա այլեւս աճելու տեղ չունի: Մինչդեռ եթէ հաշուի առնենք, որ Հայաստանի տնտեսութեան ծաւալը շատ փոքր է, իսկ աճի նախական մեկնակէտը գրեթէ զրոյական, ապա ակներեւ է, որ ոչ թէ վեց, այլ 16 տարի շարունակ նոյնիսկ եռանիշ աճը բաւարար չի լինի իրական տնտեսական յաջողութեան մասին խօսելու համար:

Դրա լաւագոյն վկայութիւնն այն է, որ նոյնիսկ վեց տարի շարունակ արձանագրուող 11-13 տոկոս աճի պարագայում երկրի բնակչութեան մէկ երրորդից անելին աղքատ է, իսկ եւս մէկ երրորդը ապրում է արտասահմանի հաշուին: Եւ դա պաշտօնական վիճակագրութեան համաձայն:

Ստացւում է, որ տնտեսութեան աճը ոչ մի նշանակութիւն չունի բնակչութեան երկու-երրորդի համար: Ի հարկէ կայ վերաբաշխման խնդիր, եւ դա առաջնային խնդիր է: Սակայն միւս կողմից, բանը միայն վերաբաշխումը չէ: Վերաբաշխելուց յետոյ հարուստներին բան չի մնայ, իսկ ժողովրդին էլ բան չի հասնի: Մինչդեռ երկրում պէտք է լինեն նաեւ հարուստներ (անկասկած միայն օրինական ճանապարհով հարստացած):

Աներկբայ է, որ տնտեսութեան աճը միանգամայն անբաւարար է նոյնիսկ Հայաստանի երեք միլիոն բնակչութեան համար: Բաշխումը միայն սոցիալական խնդիր կը լուծի, այսինքն լաւագոյն կը հասնենք Խորհրդային Միութեան վիճակին, երբ երջիկը մատչելի էր, իսկ ահա մեքենան բերեղեայ երազանք, նոյնիսկ լուացքի մեքենան, իհարկէ աշխատավարձով ապրողների համար: Եթէ աճի տեմպի անբաւարարութիւնն ակնյայտ է,

ապա ակնյայտ է, որ այն պէտք է աւելացնել:

Ազատ տնտեսութիւնը աճում է՝ արձագանքելով շուկայի պահանջին: Հետեւաբար Հայաստանի տնտեսութեան համար շուկայի սահմանները արդէն վեց տարի մնում են նոյնը, կամ ինչ որ մէկը թոյլ չի տալիս, որ տնտեսութիւնը շուկային արձագանքի նշուած 11-13 տոկոսից անելի:

Սակայն իրավիճակի ամբողջ աղետալիութիւնն այն է, որ միաժամանակ առկայ են այդ երկու գործօնները: Թէ շուկան չի ընդլայնուած, թէ տնտեսութեանը ազատութիւն չեն տալիս: Շուկայի ընդլայնման մասին խօսելիս պէտք է նկատել, որ ոչ միայն արտաքին շուկան չի ընդլայնուած Հայաստանի տնտեսութեան համար, այլ նաեւ ներքին: Եթէ աճը մնում է նոյնը, ապա դա նշանակում է, որ նոյնիսկ Հանրապետութեան տարածքում պահանջարկի աւելցում չկայ, կամ դա այնքան չնչին է, որ տնտեսութեան աճի գեներատորի դեր չի տանում:

Ընդ որում, տնտեսութեան 11-13 տոկոս աճի բաշխման մասին խօսելիս պէտք է արձանագրենք, որ այդ աճը այնուամենայնիւ բաշխուած է ժողովրդին: Դրա շնորհիւ է բիւջէի մուտքն աւելանում, աւելացնելով նաեւ ծախսերը, սոցիալական յատկացումները: Այդ դէպքում առաւել եւս պարզ է, որ 11-13 տոկոսը չափազանց քիչ աճ է Հայաստանի տնտեսութեան ծաւալի համար:

Պարզ է նաեւ, թէ ինչու է իշխանութիւնը, որ կարծես թէ պէտք է շահագրգռուած լինէր սահմանափակ շուկայի պարագայում գնէ տնտեսութեանը ազատութիւն տալու հարցում, չի ցուցաբերում նման շահագրգռուածութիւն, ամէն կերպ նոյնիսկ ստուերը: Բանն այն է, որ ստուերային աճը բաշխելու անհրաժեշտութիւն չկայ: Այն որեւէ տեղ չի արձանագրուած, բացի պաշտօնեաների եւ օլիգարխների գրպանից, հետեւաբար ժողովուրդը երբ պահանջում է տնտեսութեան աճի բաշխում, ապա նրանց, ինչպէս նաեւ միջազգային կազմակերպութիւններին իշխանութիւնը հանգիստ ցոյց է տալիս, որ ինչ աճել է, այն էլ բաշխել են: Իսկ աճել է 11-13 տոկոս:

Իսկ հարցի միւս կողմն առաւել քան մտահոգիչ է: Եթէ նոյնիսկ ընդունենք, որ իշխանութիւնը տարեց տարի կրճատում է ստուերը, ապա այդ դէպքում ուղղակի ողբերգական իրավիճակ է, երբ ստուերը կրճատուած է, իսկ պաշտօնական աճի տեմպը չի փոխուած:

Դա նշանակում է, որ կամ ստու է ստուերի կրճատման մասին հաւաստիացումը, կամ էլ արդէն վերջն է, այլեւս աճելու տեղ չկայ: Այսինքն Վարդան Օսկանեանը հենց այնպէս չասաց, թէ 100 տարի շրջափակման պարագայում էլ Հայաստանը կը զարգանայ: Իսկապէս, շրջափակման պարագայում զարգանալու համար պէտք է առնուազն հենց 100 տարի: Իսկ մենք ասում ենք՝ Օսկանեանը չի հասկանում: Լաւ էլ հասկանում է, յատկապէս երբ Լաւրովը կ'ասի: Բայց դա արդէն տնտեսութեան հետ կապ չունի: Լաւրովի ասածը չէ, այլ Օսկանեանի հասկացածը:

ՃէՅՄՍ ՅԱԿՈՐԵԱՆ «ԼՐԱԳԻՐ»

3 ՄԻԼԻՈՆԱՆՈՑ ԿԱՇԱՌԸ ԶԿՊԱԻ

Վերջերս թերթերից մէկում հրատարակուած եղաւ այն մասին, որ նախարարներից մէկը օտարերկրացի գործարարներից 3 միլիոն դոլար կաշառք է պահանջել՝ ինչ-որ հարցում աջակցելու դիմաց, իսկ նրանք այդ խօսակցութիւնը պարզապէս ձայնագրել են եւ հասցրել Քոչարեանին: Բայց որոշ ժամանակ անց Քոչարեանը պատասխանել է, թէ ձայնագրութիւնը վստահութիւն չի ներշնչում: Նոյն օրերին թերթերում ուրիշ հրատարակուած էլ եղաւ, որի համաձայն, վերջերս Քոչարեանը շատերի ներկայութեամբ խիստ դժգոհութիւն է արտայայտել բնապահպանութեան նախարար Վարդան Այվազեանի գործունէութիւնից:

Մեր ունեցած հաւաստի տեղեկութիւնների համաձայն, այս երկու իրադարձութիւններն իրար հետ անմիջականօրէն կապուած են, իսկ դէպքը տեղի է ունեցել այսպէս. Վարդան Այվազեանը ամերիկացի գործարարներից 3 միլիոն դոլար կաշառք է պահանջել՝ հանքավայրերից մէկի շահագործման իրաւունքի դիմաց: Ընդ որում, բաց տեքստով յայտարարել է, որ այդ գումարի զգալի մասը պիտի փոխանցի եւս երկու բարձրաստիճան պաշտօնեաների: Ակնյայտ է, որ դա նրանց առաջին հանդիպումը չի եղել, եւ նախարարն աւելի վաղ արդեն գործարարների հետ հանդիպած եւ կաշառքի մասին ակնարկած է եղել, դրա համար էլ այդ հանդիպմանը ամերիկացի գործարարները ներկայացել են նախապատրաստուած (զաղտնի ձայնագրիչով): Իսկ հանդիպումից յետոյ գործարարները ձայնագրութիւնը փոխանցել են ՀՀ-ում ԱՄՆ դեսպանին, որն էլ իր հերթին այն տուել է Քոչարեանին: Եւ հենց դրանից յետոյ է, որ Քոչարեանը հրատարակուած շշուկ է վարդան Այվազեանին:

Այս ամբողջ պատմութեան մէջ անհասկանալի է մնում միայն մի հարց. իսկ ինչու է Քոչարեանը բարկացել: Ծիծաղելի է անգամ պատկերացնել, թէ Քոչարեանը կարող էր Վարդան Այվազեանին կանչել իր մօտ եւ ասել. «Պարոն նախարար, դուք ձեր գործելակերպով ստուեր էք նետում մեր կառավարութեան գործունէութեան վրայ, արատաւորում էք հայ պաշտօնեայի բարոյական կերպարը, ինչն անյարժիր է մեր պետականութեան... » եւ այլն: Այն, որ մեր նախարարները (այդ թւում՝ եւ Վարդան Այվազեանը) ամէն քայլափոխի կաշառք են վերցնում, Քոչարեանի համար, իհարկէ, նորութիւն չէ: Ուրեմն ինչու էր բարկացել:

Այստեղ մի քանի հնարաւոր բացատրութիւններ կան: Առաջին՝ վերոյիշեալ «երկու այլ պաշտօնեաների» մէջ իր անունը չի եղել, եւ նա խիստ բարկացել է, որ այդ կաշառքից իրեն բաժին չէր հասնելու: Սա հաւանական է այնքանով, որքանով ընդհանրապէս հաւանական է, որ Հայաստանում որեւէ պաշտօնեայ քիչ թէ շատ մեծ գումար «վաստակի» եւ Քոչարեանին «փայ» չտայ: Երկրորդ տարբերակն այն է, որ ԱՄՆ դեսպանը պարզապէս Քոչարեանին «պատին է դէմ տուել», եւ նա ստիպուած է եղել «խիստ բարկանալ»՝ ժանրի կանոնները պահպանելու համար: Իսկ երրորդ տարբերակն այն է, որ Քոչարեանի զայրոյթն անկեղծ է եղել՝ նա բարկացել է իր ենթակայի բացառապատ ապաշնորհութեան եւ նման չիմար ձեւով բռնուելու վրայ:

Անկեղծ ասած՝ մեզ այս մանրութիւնները չեն հետաքրքրում: Ռոբերտ Քոչարեանն ու Վարդան Այվազեանն ի վերջոյ իրար լաւ էլ գտնել են ու իրար հետ լեզու կը գտնեն (հո հենց այնպէս չի ձայնագրութիւնը «վստահութիւն չներշնչող» ձայնաչուէլ): Ճոն էվանսի պահանջը նոյնպէս մեզ առանձնապէս չի մտահոգում: Եթէ նա ՀՀ իշխանութիւնների հետ շփուած է մեր «ազգային մենթալիտետի շրջանակներում», ուրեմն պիտի հասկանայ, որ իր երկրի գործարարները նոյնպէս տուժելու են այդ «մենթալիտետից»:

Մեզ միանգամայն այլ հարց է հետաքրքրում: Մինչեւ ո՞ւր կարող է հասնել այս իշխանութիւնների լկտիութիւնն ու «հաբոգածութիւնը» (Վարդան Այվազեանի արարքն այլ կերպ հնարաւոր չէ անուանել): Փաստօրէն, բոմբի հոգեբանութեամբ ու ջեբկիրի պահանջով այս մուրացկաններն արդէն այնտեղ են հասել, որ կաշառքը պահանջուած են անձամբ, բարձրաձայն, եւ ամենայն մանրամասնութեամբ գեկուցում են, թէ ում որքան բաժին են տալու դրանից: Հասկանալի է, որ հրահանգը Քոչարեանից են ստացել («փողի վրայ նստած...» արտայայտութիւնը չի շուտ էք), բայց չէ՞ որ մէկ-մէկ կարելի էր նաեւ սեփական գլխով մտածել:

Մեզ մի ուրիշ հարց էլ է հետաքրքրում: Տեսնեա ՀՀԿ ղեկավարները «կֆայմէ՞ն» շատ արագ Վարդան Այվազեանին ու նրա նմաններին հեռացնել եթէ ոչ զբաղեցրած պաշտօնից, ապա գոնէ կուսակցութիւնից: Թէ չէ մէկ էլ տեսար՝ ընտրութիւններից առաջ կուսակցութեան գլխին փորձանք-մորձանք բերեց:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ «ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ  
  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
ՍԱՐԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆՃԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԻԻԹԵԱՆ  
Շեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail),  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

**ԼՈՒՐԵՐ**

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԻՃԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԸ՝ ԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:

Հայաստանի ժողովրդական կուսակցությունը պատրաստ է միայնակ մասնակցել ընտրություններին, սակայն կուսակցությունն է «Արդարություն» դաշինքի ղեկավար Ստեփան Դեմիրճեանը չի բացատրում ընտրություններին մասնակցությունը նաև որեւէ դաշինքի կազմում:

Ապագայ խորհրդարանական արդար ընտրություններն ապահովելու հետ կապում «Օրինաց երկիր» կուսակցությունն նախաձեռնություններ միանալու հնարաւորություններն առնչությունները Դեմիրճեանը յայտարարեց. «Եթէ կուսակցություններ կան, որոնք գտնում են, որ պետք է շարժում նախաձեռնել յանուն արդար ընտրությունների, շատ լավ է, բայց, առաջին հերթին, այդ կուսակցությունները պետք է ոչ թէ լրդգուած, այլ յատուկ են անաչառ գնահատականներ տան անցած կեղծուած ընտրություններին»: Ստեփան Դեմիրճեանը ճշդեց, որ «խօսքը ոչ միայն «Օրինաց երկիր»-ի մասին է»:

«Օրինաց երկիր» կուսակցության փոխնախագահ, պատգամաւոր Մհեր Շահգեղեանի խօսքերով, շփումները տարբեր ուժերի հետ այս հարցով շարունակուած են, բայց յատակ տեղեկատուութիւն կը լինի առաջիկայում: Նրա վկայութեամբ, խօսքը չի վերաբերում միայն «Օրինաց երկիր»-ին, դա քաղաքացիական լայն նախաձեռնութիւն է՝ ուղղուած կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին եւ շարժումներին, ընդ որում՝ ֆինանսական խնդիր այստեղ չի դրուած:

«Արդարութիւն» խմբակցութեան նախկին քարտուղար Վիկտոր Դալլաքեանը յայտարարեց, թէ արդար ընտրությունների մի ուղի

ինքը արդէն բացել է՝ նկատի ունենալով երէկուանից խորհրդարանում պաշտօնապէս շրջանառութեան մէջ դրուած իր օրինագիծը, որով Ազգային ժողովի բոլոր 131 պատգամաւորները պէտք է միմիայն համամասնական ընտրակարգով ընտրուեն՝ կուսակցական կամ դաշինքների ցուցակներով: Նրա համոզմունքն է, որ Հայաստանի պայմաններում քաղաքական համակարգի զարգացման տեսանկիւնից ընդունելի է 100 տոկոս համամասնական ընտրակարգը: Օրէնսդրական նախաձեռնութեան կարեւորագոյն նպատակներից մէկն էլ, ըստ նրա, «կրիմինալի դէմ օրէնսդրական համապատասխան բազայի ստեղծումն է»:

«Գաղտնիք չէ, որ կան ուժեր, որոնք շահագրգիռ են մեծամասնական ընտրակարգով՝ փողի եւ գողբայութեան, վարչական լծակներ օգտագործելու միջոցով կեղծել խորհրդարանական ընտրությունները», - պարզաբանեց Դալլաքեանը, միաժամանակ չյստակեցնելով, թէ ո՞ր ուժերի մասին է խօսքը:

Նա կարծիք յայտնեց, որ «կրիմինալի մոբիլիզացիային» պէտք է հակադրել հայրենասիրական ուժերի կոնսոլիդացիան, եւ իր օրէնսդրական նախաձեռնութիւնը պէտք է դիտարկել հենց այդ տեսանկիւնից: «Պատահական չէ, որ խորհրդարանում ներկայացուած 6 քաղաքական ուժերից 5-ը՝ «Ազգային միաբանութիւն», «Արդարութիւն», Դաշնակցութիւն, «Օրինաց երկիր», Միաւորուած աշխատանքային կուսակցութիւն, իրենց հրապարակային ելոյթներում յայտարարել են, որ 100 տոկոս համամասնական ընտրակարգի կողմնակիցներ են», - ընդգծեց պատգամաւորը:

**ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԻ ՆՈՐ «ՏԵՂԱՇԱՐԺԵՐ» ԵՆ ՍՊԱՍԻՈՒՄ**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:

Թէեւ Ազգային ժողովի համապատասխան մարմինները այսօրուայ դրութեամբ բացի «Արդարութիւն» խմբակցությունից դուրս գալու մասին Վիկտոր Դալլաքեանի դիմումից պաշտօնապէս որեւէ այլ նման դիմում չեն ստացել, «Ազատութիւն» ռադիոկայանի տեղեկութիւններով, նոյն խմբակցությունից պատրաստուած է դուրս գալ եւս մէկ անկուսակցական պատգամաւոր՝ Թաթուլ Մանասերեանը, եւ նոյնպէս՝ դէպի «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւն:

Ի պատասխան հարցի, թէ հնարաւոր է արդեօք, որ նոր պատգամաւորներ դուրս գան խմբակցությունից, «Արդարութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Դեմիրճեանը յայտարարեց, «Մենք որեւէ մէկին ուժով չենք պահում»:

**ԺԱՔ ՇԻՐԱՔԸ ՓՈՒՆԵ՞Լ Է ԾՐԱԳԻՐԸ**

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Ըստ մեր ունեցած տեղեկութեան, Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքը, որ ծրագրում է Հայաստան այցելել Սեպտեմբերի կէսերին, անակնկալ որոշում է կայացրել այցի արարողակարգի հետ կապուած: Որոշ տեղեկութիւնների համաձայն, Ֆրանսիայի նախագահը որոշել է Հայաստանեան այցի արարողակարգից հանել Ազգային ժողով այցելութիւնը: Որոշման լրջութեան մասին է խօսում ոչ միայն այն, որ որոշում կայացնողը Ֆրանսիայի նախագահն է, այլ նաև այն, որ Շիրակը ծրագրում է փոխել Հայաստանի պետական արարողակարգի ծրագիրը: Նշանակում է՝ ունի ծանրակշիռ պատճառ: Ի դէպ, սա առաջին դէպքը կը լինի, երբ որեւէ նախագահ Հայաստան այցի ժամանակ չի այցելում Ազգային ժողով:

**ՊԱՇՏՊԱՆՔԵՆ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ**

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Հաւաստի տեղեկութիւնների համաձայն, ՀՀԿ արտահերթ համագումարից առաջ Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վլադիմիր Պուտինը Ռոբերտ Քոչարեանին անձամբ յորդորել է կուսակցական դառնալուց յետոյ պաշտօնակն անել պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանին: Ռոբերտ Քոչարեանը Սարգսեանին յայտնել է այդ մասին եւ առաջարկել ՀՀԿ կազմ մտնելուց յետոյ ներկայացնել պաշտպանութեան նախարարի պաշտօնից հրաժարուելու դիմում: Սերժ Սարգսեանը չի համաձայնել: Որոշ տեղեկութիւնների համաձայն, դրանով էր պայմանաւորուած փաստը, որ Ռոբերտ Քոչարեանը խուսափեց Յուլիսի 21-ին մեկնել ԱՊՀ ոչ պաշտօնական վեհաժողովին մասնակցելու:

Յատկանշական է, որ տեղեկութիւն կայ այն մասին, թէ ինչպէս պաշտպանութեան նախարարութեան կոլեգիայի նիստում նախարարի հասցէին բաւական կոնկրետ եւ խիստ ակնարկներ է արել ԶՈՒ Գլխաւոր շտաբի պետ Միքայէլ Յարութիւնեանը: Այդ մասին յայտնող աղբիւրները նշում են, որ Միքայէլ Յարութիւնեանը եւ բարձրագոյն հրամակազմի մի շարք այլ անդամներ բաւական որոշակի դժգոհութիւն են արտայայտել քաղաքականութեան մէջ բանակը ներքաշելու հաւանականութեան կապակցութեամբ, դա համարելով սպառնալիք ԶՈՒ եւ

երկրի անվտանգութեանը: Փաստն ուշագրաւ է նրանով, որ Միքայէլ Յարութիւնեանը համարում է ռուսական դպրոցի գեներալ եւ ընկալուած է իբրեւ ռուսական ուղղութեան ներկայացուցիչ, ով սերտ կապի մէջ է ՌԴ զինուորական բարձրաստիճան ղեկավարութեան հետ:

Իր հերթին, ՀՀԿ-ն նոյնպէս իր խողովակներով ճշդել է այս տեղեկատուութիւնը, եւ դա լրացուցիչ լարուածութիւն է առաջացրել այդ կուսակցութեան առանց այն էլ յեղյեղուկ իրավիճակում: Բանն այն է, որ ՀՀԿ վերնախաւի մօտ խորացել է կասկածը, թէ պաշտպանութեան նախարարը, չունենալով Ռուսաստանի իշխանութեան անվտանգութիւնը, կարող է կուսակցութեանը յաջողութիւն բերել խորհրդարանի ընտրութեանը: Որոշ տեղեկութիւնների համաձայն, ՀՀԿ ներսում, նեղ շրջանակի զրոյցներում սկսել են աւելի յաճախ լինել Երեւանում մի քանի ամիս առաջ ՌԴ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանովի արած յայտարարութիւնը նախագահի պաշտօնի կապակցութեամբ, երբ Իվանովը, նստած լինելով Սերժ Սարգսեանի կողքին, բաւական յստակ էր պատասխանել նախագահի իրաւաւորող լինելու իր հեռանկարի մասին հարցին: Իվանովն ասել էր, որ ինքը պաշտպանութեան նախարար է եւ եթէ մտածի նախագահ դառնալու մասին, ապա լաւ չի կատարի իր ուղղակի պարտականութիւնը:

**ՂԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՆ Ե ԿԱՆՉՈՒՄ ԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԻՆ ՕՐԸՆԵՐԳԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ ՄՇԱԿՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ**

ԵՐԵՒԱՆ, «ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:

Օգոստոս 28-ին Դաշնակցութեան Գերագոյն մարմինը յայտարարել է, որ դադարեցնում է իր ներկայացուցչի գործունէութիւնը Հայաստանի օրհներգի մասին օրէնքը մշակող միջգերատեսչական յանձնաժողովում եւ հանդէս է գալիս «Մեր Հայրենիք»-ը որպէս օրհներգ վերահաստատելու օրէնսդրական նախաձեռնութեամբ:

«Յանձնաժողովն անհասկանալի պատճառներով իր խնդիրը համարեց գործող «Մեր Հայրենիք» օրհներգը միանշանակ մերժել եւ այն նոր օրհներգով փոխարինելը», - ասուած է յայտարարութեան մէջ: - «Յատկապէս ակնառու էր «Մեր Հայրենիք»-ի նկատմամբ սանձազերծուած հակաքա-

րոզութիւնը: Իրավիճակը դառնում է խիստ մտահոգիչ եւ դատապարտելի, երբ ազգային եւ պետական արժէքների ճիշդ չափորոշիչներով գնահատում փոխարինում է գուտ գեղագիտական նախասիրություններով իրականացուող մրցութային ընթացակարգով»:

Դաշնակցութիւնը «Մեր Հայրենիք»-ը համարում է «այլընտրանք չունեցող, իր գոյութեան արդէն երրորդ դարը թեւակոխած, հայ ժողովրդի ազատագրական պայքարի եւ պետականաշինութեան անբաժան ուղեկից»:

Հայաստանի օրհներգի մասին օրէնքը մշակող յանձնաժողովում Դաշնակցութեան ներկայացուցիչը Ազգային ժողովի պատգամաւոր Ռուբէն Յովսէփեանն է:

**«ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒՂԱՐ ԸՆՏՐՈՒԹՅ ԳՐԻԳՈՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

Հայաստանի Ազգային ժողովի «Արդարութիւն» ընդդիմադիր խմբակցութիւնը միաձայն խմբակցութեան քարտուղար ընտրեց Հայաստանի ժողովրդական կուսակցութեան վարչութեան քարտուղար Գրիգոր Յարութիւնեանին:

Նիստին, բացի ՀԺԿ պատգամաւորներից, ներկայ էին նաև ԱԺԲ-ի, ԱԺԴ-ի, Դեմկուսի, «Ազգային վերածնունդ»-ի նախագահներ Վազգէն Մանուկեանը, Արշակ Սարգսեանը, Արամ Սարգսեանը, Ալբերտ Բաղդեանը, ինչպէս նաև անկուսակցական Թաթուլ Մանասերեանը:

Խմբակցութեան քարտուղարի պաշտօնը թափուր էր մնացել այն բանից յետոյ, երբ այս ամիս իր հրաժարականն էր ներկայացրել Վիկ-

տոր Դալլաքեանը: Խմբակցութիւնն նիստում որոշեց նաև հետ կանչել իր «հեղինակային ստորագրութիւնը» Ընտրական օրէնագրքի փոփոխությունների նախագծից, պատճառաբանելով, թէ ակնյայտ է, որ Ազգային ժողովը 100 տոկոսով համամասնական ընտրակարգով ձեւաւորելու առաջարկը ընդունելի չէ մեծամասնութեան համար:

«Արդարութիւն» խմբակցութեան անունից նախագիծը՝ վերապահումներով ստորագրել էր Գրիգոր Յարութիւնեանը, որն էլ այսօր ստորագրութիւնը հետ կանչելու դիմումը՝ ուղղուած Ազգային ժողովի նախագահին, ներկայացրեց քարտուղարութիւնը:

**ԼՈՒՐԵՐ**

**ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ  
ԹՐԲԱԿԱՆ ՉՈՐՔԵՐՈՒ ԼԻԲԱՆԱՆ  
ԺԱՄԱՆՈՒՄԻՆ ԴԵՄ**

Հայ քաղաքական երեք կուսակցություններու՝ ՌԱԿԻ, ՍԴՀԿԻ եւ ՀՅԴԻ ղեկավարություններս խորապէս կը զննատեսնք լիբանանեան կառավարութեան ջանքերը գինադադար հաստատելու, պատերազմի արևնահեղութիւնը դադարեցնելու, խաղաղութեան ու կայունութեան հաստատման համար աշխատելու եւ Լիբանանի դէմ իսրայէլեան վերջին յարձակումին ընթացքին քանդուածը վերակառուցելու առնչութեամբ: Նաեւ կ'ողջունենք Ապահովութեան Խորհուրդի թիւ 1701 բանաձեւը, որուն մէջ հարաւային Լիբանանի մէջ տեղակայուած ՖԻՆԻԻԼԻ ուժերուն թիւը աւելցնելու տրամադրութիւն կայ. այս ծիրին մէջ կ'արձանագրենք մեր եւ Լիբանանահայ համայնքի խիստ մերժումը հարաւային Լիբանան տեղակայուելիք միջազգային խաղաղարար ուժերուն մէջ թրքական ուժերու մասնակցութեան:

Ա.. Թրքական ուժերու մասնակցութիւնը հարաւային Լիբանանի մէջ տեղադրուելիք միջազգային խաղաղարար ուժերուն կը խախտէ միջազգային ուժերու անկողմնակալութեան սկզբունքը, հետեւաբար կ'արգելակէ Լիբանանի մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման ջանքերը: Միջազգային խաղաղարար ուժերուն մաս կազմող որեւէ ուժ պէտք է տազնապի կողմերէն մէկուն կողքին ըլլայ, մինչդեռ Թուրքիա թշնամանք ունի բազմաթիւ երկիրներու եւ ժողովուրդներու հետ եւ իր պատմութիւնը կը վկայէ անոնց հետ յարաբերութեան արիւնալի էութիւնը: Միւս կողմէ, Թուրքիա իսրայէլի հետ կնքած է յարձակողական, պաշտպանողական բնոյթի զինուորական դաշինք մը, որ կ'ընդգրկէ նաեւ գաղտնի սպասարկութեանց համագործակցութիւնը: Իսրայէլի հետ կնքուած այս համաձայնագիրը կը սպառնայ շրջանին մէջ խաղաղութեան գործընթացին, եւ իսրայէլի պետութեան նկատմամբ Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան կողմնակալ կեցուածքը մեզ կասկածելու կը մղէ:

Բ.. Թուրքիա կը շարունակէ բռնագրաւել հիւսիսային Կիպրոսը, շրջափակման կ'ենթարկէ Հայաստանը եւ կը մերժէ ճանչնալ 1915ին կողմէ գործուած Հայկական Յեղասպանութիւնը ու ներողութիւն խնդրել այդ ոճիրին համար:

Գ.. Թուրքիա կը շարունակէ մարդկային իրաւանց խախտումը եւ փոքրամասնութիւններու իրաւանց կապտումը, ինչ որ զինք ատակ է ի դարձներ մասնակցելու միջազգային խաղաղարար կայուն առաքելութեան մը:

Դ.. Կասկած չկայ, որ միջազգային ուժերուն մաս կազմող որեւէ ուժ պէտք է ընդունելութիւն գտնէ Լիբանանեան ընկերութեան կողմէ. Լիբանանի մէջ հալածանքով եւ բռնատիրական լուծումով լեցուն Թուրքիոյ պատմութիւնը չ'օգնէր արժանանալու այդ ընդունելութեան՝ նկատի առնելով, որ Լիբանանցի ժողովուրդը տակաւին իր հաւաքական չիշողութեան մէջ կը կրէ թրքական ոճիրներու եւ բռնատիրութեան հետքերը:

Մեկնելով այս իրողութիւններէն, կը վերահաստատենք մեր ընդդիմութիւնն ու մերժումը հարաւային Լիբանանի մէջ տեղակայուելիք միջազգային խաղաղարար ուժերուն մէջ թրքական ուժերու ներառումին, եւ Լիբանանեան պետութեան կը պահանջենք չ'ընդունիլ այս ուժերուն մասնակցութիւնը՝ գորակցելով Լիբանանահայ համայնքի զաւակներուն փափաքին, համայնք մը, որ Լիբանանեան ընկերութեան կարեւոր մէկ հատուածը կը կազմէ: Լիբանանեան կառավարութեան ուղղուած մեր այս նամակով կու գանք կառավարութեանէն պահանջելու, որ Լիբանանի մէջ թրքական ուժերուն ներկայութիւնը մերժող հայկական կեցուածքը ներառէ իր օրակարգին մէջ, մանաւանդ որ աշխարհի այս շրջանին մէջ Լիբանանի իւրաքայտկութիւնը, որ կը կայանայ համախոհական համակեցութեան հայրենիք մը ըլլալու իրականութեան մէջ, կը պարտաւորեցնէ իր ղեկավարներուն կառչելու համայնքային եւ քաղաքակրթական տարբերութիւններուն յարգանքէն՝ մեկնելով իւրաքանչիւր համայնքի ինքնութեան, պատկանելիութեան, մշակոյթի եւ որոշումներու իւրաքայտկութեան յարգանքէն: Այս իւրաքայտկութիւնը պիտի մնայ Լիբանանի ուժը եւ չաղթանակի խաղաքարտը՝ ընդդէմ բոլոր մարտահրաւէրներուն, ինչպէս նաեւ պիտի մնայ այն խաղաքարտը, որով Լիբանան պիտի վերջապէս եւ աւելի եւս զարգանայ:

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶՏՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ  
ՍՈՅՒԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ  
ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ**

**ԿԱՐՍ-ԱՆԱԼԵԱԿ-ԹԻԼԻՍԻ-ՊԱԵՈՒ  
ԵՐԿԱԹՈՒԴՈՒ ԾԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍՈՒԻ  
2007 ԹՈՒԱԿԱՆԻՆ**

«Կարս-Ախալքալակ-Թբիլիսի-Պաքոն երկաթուղին ռազմավարական նշանակութիւն ունի Թուրքիայի համար, իսկ ծրագրի իրագործումը, ըստ Թուրքիայի, Ատրպէյճանի եւ Վրաստանի որոշման, կը սկսուի արդէն 2007 թուականին», - «Թրենդ»-ի փոխանցմամբ, Իզդիրում յայտարարել է Թուրքիայի տրանսպորտի նախարար Բինալի Եիլդիրիմը:

«Ծրագրի իրագործմանը յատկացուելու է 320 միլիոն դոլար», - նշել է նախարարը՝ աւելցնելով, թէ «երկաթուղու շնորհիւ Թուրքիան կը դառնայ հիմնական դերակատարը Եւրոպայի եւ Ասիայի միջեւ տրանսպորտային փոխադրումներում»:

Եիլդիրիմը նաեւ տեղեկացրել է, թէ ներկայումս քննարկուած է Կարսից Նախիջեւանի տարածքով դէպի Իրան երկաթուղու կառուցման հարցը:

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)

**ՇԻՋԵՑԱԻ ԲԱՐՁՐԱՐՈՒԵՍ ՎԱՍԱԿԻ ՏԵՐ  
ԲԱՆԱՍՏԵՂՈՒԿԻՆ՝ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ**

Շարունակուած էջ 1-էն

ցաւերն ու ուրախութիւնները, ճախողութիւններն ու յաջողութիւնները, երազները: Կը գօտեպնդէր Սփիւռք-Հայրենիք կապերու առաւել սերտացումը եւ կը գործէր այդ ուղղութեամբ, «Բայրոյ կարաւաններու» հետեւեալով: Ան առիթով մը անցնող մի քանի ամիսներու, պիտի գրէր «Կիլիկիա Նաւի անձնակազմին» (Ազգ), «...որ ամառն է մեր մէջ մեր Կիլիկեան մախնիներին ոգին, որ մեզմէ դեռ պիտի ապրենք, ստեղծենք, հասցնենք մեր արդար երազներուն»:

Սիլվա Կապուտիկեան, անկախաբար իր յուզական ներաշխարհէն՝ դրսեւորեց գաղափարապէս կազմաւորուած ու պայքարի առաջին շարքերու վրայ կեցած երդումը շարքայինի անկրաւորութիւններու դէմ: Ձաղկեց ժողովուրդները շահագործող եւ ստրկացնող ուժերը: Քաջալերեց ժողովուրդներու բարեկամութիւնը: Պաշտպանեց անոնց իմքոքման իրաւունքը:

Իր ժողովուրդի ու հայրենիքի իրաւունքներու պաշտպանութեան դիրքերու վրայ մնալու գաղափարական ուժեղ գիծը չէ՞ր, որ ան անխնայ պայքարեցաւ, մերօրեայ, այսպէս կոչուած անկախ հայրենիքէն ներս ի գործ դրուած անարդարութիւններու, չարաշահութիւններու, բռնատիրական վարչակարգի, ապօրինութիւններու դէմ: Անոնք յանգեցան հայաբափումի, ինչպէս պիտի ըսէր մեր մեծ բանաստեղծուհին Գրողներու Բ. Համագումարին. «Իշխանութիւններին անհեռատես քաղաքականութեամբ, հայաբափումն ոչ միայն տարածութիւնները, այլեւ մարդկանց հոգին»:

Սիլվա Կապուտիկեանի մահով, հայ մշակոյթը, հայ ժողովուրդն ու հայրենիքը կը կորսնցնեն մեծ պաշտպան մը, բարձրարժեք գործիչ մը, երախտաւոր մը, որուն անունը միշտ ու ամէն ուր բարձր պիտի հնչէ մեր նոր սերունդներու շրջաններուն վրայ:

Բիր յարգանք իր անթառամ յիշատակին:

**ՎԵՐՋԻՆ ԸՐԱԾԵՑ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻՆ**

Շարունակուած էջ 1-էն

Եւ անձնուէր ծառայեց մեր հասարակական կեանքի բարենորոգման ու ամրապնդման նուիրական գործը:

Կոմիտասի անուան պանթէոնին ներս Սիլվա Կապուտիկեանի աճիւնը ամփոփուեցաւ Արամ Խաչատրեանի շիրիմի մօտ: Սիլվա Կապուտիկեան ակտիւ-



Սիլվա Կապուտիկեանի աճիւնի մօտ պատուոյ պահակ կանգնած են յուղարկաւորութեան կառավարական յանձնաժողովի անդամները՝ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի գլխաւորութեամբ

ծին», - իր հրաժեշտի խօսքին մէջ Վեհափառ Հայրապետը: - «Խունկ, աղօթք եւ օրհնութիւն բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի պայծառ յիշատակին»:

Ինչ մասնակցած էր Հայաստանի հասարակական կեանքին, հրապարակային ելոյթներ ունեցած էր դարաբաղեան շարժման ժամանակ:

2004 թուականի Ապրիլ 13-ի դէպքերէն ետք, երբ Հայաստանի իշխանութիւնները բռնի ուժով ցրուեցին ժողովրդային խաղաղ ցույցը, Սիլվա Կապուտիկեան ի նշան բողոքի ետ վերադարձուց Ռոբերդ Քոչարեանի կողմէ իրեն շնորհուած «Մեսրոպ Մաշտոց» շքանշանը:

**ԸԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԸՆԴԴԻՍԱՆԱԼ**

Շարունակուած էջ 1-էն

Կայանին յայտնած է թէ, խորհրդակցութիւններ տեղի պիտի ունենան երկու երկիրներու արտաքին գործոց նախարարութիւններուն միջեւ:

Չոցով ստանում ենք ամբողջական տեղեկատուութիւն, եւ երբ միջազգային խաղաղարար ուժերը յայտնուեն Լիբանանում ու սկսեն իրենց գործողութիւնները, երեւի աւելի յստակ կը լինի մեր անելիքը», - ըսած է Գեղամ Ղարիբջանեան:

Ներկայիս Հայաստան խաղաղարար գործեր ունի Քոսովոյի եւ Իրաքի մէջ:

«Հայաստանը ուշի-ուշով հետեւում է զարգացումներին, մենք անընդհատ մեր դեսպանատան մի-

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵՐՕՐԵԱՅ ՄԻԱԲԵԻԵՌ ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾՊԵՏԱԿԱՆ ԱՅԱԲԵԿԻՉՆԵՐԸ

ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ներկայիս ամբողջ աշխարհը սարսափեցնող, ահաբեկող քաղաքական միաբեկու սանձարձակապետությունը - իր վրայ հակադրուած ի բացակայութեան իսկ հետեւանքով - աւելի եւս կը խորանայ ամէն օր: Կը դառնայ աննախատեսելի, հակաժողովրդական, խիստ վտանգաւոր:

Կարճատես բախտախնդիրներու ռազմամոլ խմբակ մը՝ կեղծկրօնական եւ մշտնջապատ քաղաքականութեան մը տոն-քիչութեան դրօշին տակ, իր պոռոտախօսութեամբ եւ հայրենասիրութեան պատուանդանին բազմեցուցած այլատեսցութեան կարգախօսերով պատանդ առած է իր սեփական երկրի եւ ամբողջ աշխարհի անստոյգ ճակատագիրը: Այս հրոսակախումբին համար անիմաստ, անտեղի հասկացութիւններ են իր ժողովուրդի եւ մարդկութեան բարօրութիւնը, ապահովութիւնը:

Հարիւր տոկոսով ամբողջատիրական է իրենց դիտակէտը, մօտեցումը, աշխատելակերպը - բան մը որով անոնք յաճախ տեղիանտեղի կերպով մեղադրած են շարք մը այլ երկիրներու պետական կարգերը: Անոնք իրենց ամբողջական տիրապետութեան տակ առած են երկրին զինեալ ուժերը, բանակը, Քոնկրետը (Ներկայացուցիչներու Տունը եւ Ծերակոյտը միաժամանակ), արդարադատութիւնը (որուն բարձրագոյն մարմինը՝ Գերագոյն Ատենար, իր կազմի հինգ ձայներով նախագահ «ընտրեց» - նշանակեց Հանրապետական Կուսակցութեան թեկնածու ճորճ Պուշը՝ անտեսելով ու փոխարինելով հարիւր միլիոնն անցնող ժողովրդային քուէներու արդար ու

կարգապահ հաշուարկումը):

Հանրային կարծիք կոչուած յարածուփ երեւոյթին հանդէպ միայն արհամարհանք կայ անոնց հաշիւներուն մէջ: Թող ժողովուրդը տրտնջայ, մըթմըթայ, բողբջ ու պահանջէ: Անոնք իրենց ականջները չեն իսկ դարձներ նման «արմուկներու»՝ թէկուզ բնակչութեան մեծամասնութիւնը Պուշին պահանջէ ապօրինի ճամարտակութիւններով իր ձեռնարկած ու Քոնկրետի պարտադիր վաւերացումը չստացած, քրէական բնոյթով պատերազմներու կասեցումը, ամուլ արշաւանքներուն դադարեցումն ու զօրքերուն յետքաշումը: Թէկուզ հարցախոյզերը միայն 18 տոկոս կողմնակիցներ ցոյց տան յօգուտ փոխ-նախագահ Տիք Չէյնիին: Թէկուզ Տանըլտ Ռեմզֆելտ միայն ձախորդ, արիւնալի եւ անել պատերազմներու տիրահոշակ շարք մը ունի ցանկագրելու երբ բեմ կ'ելլէ՝ դերասանական սթաքաթօշինով ինքնավստահութեամբ, անբան ելոյթներով, անիմաստ ծրագիրներով:

Հակառակ նման իրավիճակի, անոնք առանց տատամտումի յառաջ կը տանին աշխարհակալական իրենց քանդիչ յայտագիրը: Կը գրաւեն, կը զերեվարեն, կը սպաննեն, կը բռնաբարեն, կը դատեն: Կ'ոչնչացնեն երկիրներ ու մարդեր, ծերեր ու կիներ, անկարներ ու մանուկներ յանուն ահաբեկչութեան դէմ «պատերազմի»: Ձեռականօրէն ու միայն արտաքնապէս «պատերազմ» որակուած այս բովանդակազուրկ լոգունգը կարելի է նկատել՝ շուքը հետապնդելու ապարդիւն եւ ամուլ ինքնախաբէութեան: Ահաբեկչութիւնը տուեալ երկրի մը պատկանող բանակ չէ որուն դէմ կարելի ըլլայ իջեցնել համապատասխան բանակ ու պատերազմիլ: Այլ խօսքով, իմաստ

զուրկ, ամբոխավարական հնարք մըն է հաւաքեկչութեան դէմ պատերազմ շղթայագրածելու կարգախօսը: Պատրուակ մը, լաւագոյն պարագային, որ կը նպատակադրէ իր յուսախաբութեան եւ անկարողութեան մաղձը կամ շանթը թափել՝ ահաբեկչութեան հետ ոչ մէկ աղերս ունեցող երկիրներու եւ ժողովուրդներու գլխու վրայ - Աֆղանիստան, Իրաք, Սուրիա, Իրան, Հիւսիսային Քորէա, մինչեւ որ հասնինք Լիբանան (այս վերջին ոճիրն ալ՝ անգիտակ եւ անկարող է՛նուտ Օլմերթի սիրտը պաղշտկելու դիտաւորութեամբ):

Նախագահ ճորճ Պուշի ներկայ վարչակազմի թիկունք կանգնող ամերիկեան չքնաղ հաստատութիւններէն մէկն է գանգուածային լրատուութիւնը: Երկրէն ներս եւս միաբեկու երեւոյթ ստացած են մամուլը, ռատիօ, հեռուստացոյց, ակադեմական-հասարակագիտական-քաղաքագիտական հրատարակութիւններ: Անփառուակ նահանջ՝ լրատուական գրեթէ բոլոր ճակատներու վրայ: Քիչեր կը համարձակին անկախ կեցուածք ցուցաբերել: Քիչեր քաջութիւնն ունին սահմանադրական հաշիւ պահանջելու իշխանութիւններէն: Անոնց յիշեցնելու եւ խլացած ականջներուն պուռլու թէ միայն Քոնկրետը իրաւասութիւնն ունի պատերազմ հռչակելու այլ պետութեան մը դէմ:

Պուշ, Չէյնի եւ Ընկերք լիուլի կ'օգտուին այս կացութենէն, քանի հարազատօրէն ընդդիմադիր հաշուառելի ուժ մը չեն գտներ ռազմամոլական իրենց երթին դէմ: Ըստ իշխանութեան ընթացիկ շահերու թելադրանքին, ներքին ապահովութեան վիճակը խորհրդանշող դեղին, նարնջագոյն կամ կարմիր գոյները իբր թէ երկրի ապահովութեան աստիճանը կը ցուցայտեն

օրը օրին՝ պատասխանատու քարտուղար Չերթոֆի փողկապներու համապատասխան գոյներու փոփոխութեան անմիջական հետեւողութեամբ:

Ժողովուրդին արթուն կորիզը անշուշտ չի կրնար չտեսնել՝ իր ապագան ինդրոյ առարկայ դարձնող այս թեթեւօրիկ բեմականացումը: Բայց շփոթի մէջ են անոնք: Ամէն օր սուտերով սնուցուած, ապակողմնորոշուած, ճնշումներու ենթակա: Անոնց զլացուած է ճանչնալ աշխարհի այլ կէտերուն վրայ գործուող ոճիրներու եւ այլ եղելութիւններու միտք բանին: Ասիկա ապահովելու նպատակով, իշխանութիւններու հաւատարիմ եւ անբան գործակիցը դարձած են՝ ազատութիւն բարբառող ամերիկեան գանգուածային լրատուութեան գլխաւորները - յատկապէս վերջին տարիներուն:

Կացութեան միակ ելքը - անըջական կարելին՝ պիտի ըսէր բանաստեղծը - համբերատար, երկարժամկէտ բացատրողական ու կազմակերպչական աշխատանքն է՝ բարի կամեցողութեան տէր աշխարհի բոլոր պարկեշտ մարդոց հետ համագործակցաբար վերագրաւել ժողովուրդին պատկանող երկիրը՝ իր գիշատիչ յափշտակիչներէն: Ներկայ վարչակազմի ապիկարութիւնը ինքնին ատակ է անապատելի պատեհութիւններ ստեղծել՝ երկիրը ու աշխարհը այնպիսի անտանելի կացութեան մատնելով որ ա'լ յորդի ժողովուրդի համբերութեան բաժակը:

Պէտք չէ մոռնալ, սակայն, որ քանի մը սերունդներու տքնաջան աշխատանքով միայն կարելի պիտի ըլլայ վերականգնել այն որ քաղաքական ու ռազմական աներեւակայելի տխմարութեամբ քանդուեցաւ վերջին քառօրդ դարուն թացքին:

PEACE through MUSIC Ending Hate · Giving Hope · Bringing Joy. The Pasadena Human Relations Commission presents: A Benefit Concert to Save Our Children from violence. Featuring a Wide Variety of Musical Talents. September 16, 2006 Saturday, 7:30 pm At the First Church of the Nazarene of Pasadena. Master of Ceremonies FURNELL CHATMAN NBC 4 News Reporter. Artists include YIN YIN HUANG, HOLAN SHAHEED, LOUIZA, THE HARMONIUM TRIO, BASIA, EDDIE CUNNINGHAM, YUVAL RON, LIL MAX 50, RUTH DAVIS & THE MOUNTAIN CLIMBERS, LALA.

INSURANCE COVERAGE CAN HELP YOU FINANCIALLY. I AM A PIECE OF PAPER BUT EVEN MORE. 1. I am an idea. 2. I accumulate money. 3. I am a promise for the future. 4. I can help educate your children. 5. I can guarantee the continuity of business. 6. I provide cash if death cut breadwinners income. 7. I am property that increases in value from year to year. 8. I lend money when you need it. With no questions asked. 9. I am tangible evidence that a man is a good husband and father. 10. I bring dignity, peace of mind, and security to the later years of life. 11. I am a declaration of financial independence, a charter of economic freedom. 12. I am the only thing that father can buy on the installment plan the mother does not have to finish paying for. 13. I am the financial guardian angel of the HOME. 14. I am your insurance policy. MARONIAN. Blue Cross of California, Blue Shield of California. A.B.A. INSURANCE SERVICES. TEL: 818 500-9585 - E-mail: BMaronian@aol.com. 805 E. Broadway, Glendale, CA 91205 www.ABAinsuranceServices.com

ԱԶԳԱՅԻՆ

ՈՐՊԵՍՁԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅՈՒԹԻՒՆԸ

ԵՐՈՒԱՆԻ ՊԱՊԱՑԵԱՆ

Ձարիքը դարձեալ զարկաւ Լիբանանին: Աւելի քան ամիս մը ան կրեց զարհուրանքը, սարսափելի, մահացու ու մահաբեր մտնէրու եւ անարգ շրջափակումի: Ամէն կողմ աւեր ու արիւն: Հրադադար է այժմ: Մաղթենք որ վերջ գտած ըլլայ ողբերգական այս իրադարձութիւնն ալ:

Քրիստոնեայ եւ մահմետական բոլոր համայնքներու իրաւախոհութեամբ գոյացած համակեցութեամբ կանգուն Լիբանանը մարդկային, օրինակելի խճանկար է հազուագիւտ:

Անոնք որ ապրած են օրհնեալ այս երկրին մէջ 70ական թուականներուն, կը հաստատեն թէ ան հասեր էր յաջողութիւններու բարձրակէտին: Բարգաւաճ ու յառաջադէմ երկիր՝ իրաւամբ կը վայելէր համբաւը ջուրհեղձի նախանձելի դիրքին հասած ըլլալու: Գեղակաւ ու յեղեղեցիներու վեհանիստ գանձակատուներու քաղցրալուր դողանջները եւ նոյնքան գեղակաւ ու յեղեղեցիներու սլացիկ աշտարակներէն բարձրացող քաղցրաձայն աղօթքները խորհրդանշել կը հանդիսանան տարբեր դաւանանքներու հետեւող մարդերու բարեկամութեան ու սերտակցութեան:

Լիբանան հարուստ է թեթեւ արդիւնաբերութեան, ճարտարարուեստի եւ արտաքին աշխարհի հետ առեւտրական յարաբերութիւններու արագ զարգացումով եւ միջազգային բազմաթիւ դրամատուներու ետեւ գործունէութեամբ: Միւս կողմէ, Պէյրութէն մինչեւ հեռաւոր անկիւնները Լեռնալիբանանի՝ հրապուրիչ համադրութիւն մը կը կազմեն հազարաւոր շքեղ կառուցանքներն ու ամարանոցները:

Հոս միջանկեալ կ'ուզեմ արձանագրել թէ Լիբանանի յաջողութիւններուն մէջ իր պատուաբեր բաժինը ունեցաւ լիբանանահայութիւնը: Արդարեւ, Յեղապանութենէն վերապրողներս Լիբանանի եւ Սուրիոյ արաբ ժողովուրդին կողմէ զրկաբաց ընդունուելէ ետք, մենք չարքաշ եւ անխոնջ աշխատանքով մասնակցեցանք այս երկու երկիրներու զարգացման, ըրինք մեր լաւագոյնը՝ որպէս երախտագիտական հատուցում: Ուրախալի է անշուշտ, որ փոխարէնը արժանացանք արդար գնահատանքի: Արաբ մեր եղբայրները բարձր գնահատեցին հայութեան ներդրումը: Մեզմէ շատեր գովասանքներ լսած են իրենց արաբ դրացիներէն ու ծանօթներէն: Սախա Աբըլի, Մուսա Փրէնսի, Ռաշիտ Սոլհի նման շատ ականաւոր մտաւորականներ հրապարակաւ յայտարարած են «Մեր հայ եղբայրները աշխատասիրութիւն եւ արհեստներ սորվեցուցին մեզի»:

Ինչ խօսք որ Լիբանանի բնական գեղեցկութիւնը, տնտեսական զարգացումը եւ լիբանանցիին ազնուութիւնը, վստահելիութիւնն ու հիւրասիրութիւնը մեծապէս նպաստեցին զբօսաշրջիկութեան զարգացման: Բազմահազար զբօսաշրջիկներ աշխարհի բոլոր կողմերէն, առաւելաբար արաբական երկիրներէ, ամէն տարի հանգստանալու կու գան Լիբանան, նպաստելով անոր տնտեսութեան:

Բոլոր այս դրական տուեալները գոհունակութիւն կը պատճառեն բարեկամ երկիրներու, սակայն

դժգոհութիւն՝ հարաւի դրացիին՝ Իսրայէլին: Յեղապաշտ, յաւակնոտ ու օտարատեսաց հրեաները չեն հանդուրժեր Լիբանանի նման բարգաւաճ երկրի մը գոյութիւնը: Ձայն կը նկատեն վտանգաւոր մրցակից:

Այս վերջին կռիւներուն պատճառը Հրգպալլան կը նկատեն ոմանք սխալմամբ, մոռցաւ թէ 2 հրեայ գինուորի դիմաց բազմաթիւ լիբանանցիներ կան Իսրայէլի բանտերուն մէջ: Իսրայէլ միշտ պատրուակ մը գտած է Լիբանանի հանգիստը խանգարելու իրեն յատուկ ծածուկ մեքենայութիւններով: Ան կը ջանայ խոռովել Լիբանանի խաղաղութիւնը, քանդելով տարբեր համայնքներու միջեւ գոյութիւն ունեցող աւանդական համակեցութիւնը, անջատ երկու Լիբանան ստեղծելու հեռանկարով թերեւս: Իր այս նենգ, քողածածուկ միջամտութեան հետեւանքով յառաջ եկան 1975ի ներքին կռիւները համայնքներու միջեւ: 15 տարի տեւած կռիւներու ընթացքին աւերուեցան բազմաթիւ հաստատութիւններ եւ

տուններ, գոհուեցան հարիւրաւոր անմեղ լիբանանցիներ: Ի պատիւ լիբանանահայութեան, պէտք է ընդգծել թէ հայութիւնը չմասնակցեցաւ կռիւներու, հակառակ ճնշումներու, հեռատես եւ խոհեմ որոշումով, դեկավարութեամբ մեր երեք կուսակցութիւններու, որոնք գրեթէ գրական չէզոքութիւն: Քաջարի մեր տղաքը, առանց մէկ փամփուշտ արձակելու հայաբնակ շրջանները յաջողեցան պաշտպանել ոտնձգութիւններու դէմ:

Վերջին այս ողբերգութեան ընթացքին լիբանանահայութիւնը անգամ մը եւս արտայայտեց արաբ ժողովուրդին հանդէպ իր համակրանքը: Լիբանանի հարաւային շրջաններէն խուճապահար փախչող հազարաւոր դժբախտ ընտանիքներ ապաստանեցան հայաբնակ թաղերու, յատկապէս Պուրճ Համուտի մէջ, ուր կարելի ամէն աջակցութիւն գտան հայերու կողմէ:

Վաղը, խաղաղութեան պայմաններու մէջ շուտով պիտի վերականգնուի աւերուած Լիբանանը, անշուշտ շնորհիւ արտաքին նիւթական մեծագումար օժանդակութիւններու:

Այս անգամ, բարեբախտաբար, հայաբնակ շրջանները գերծ

մնացին ու մահաբերութեամբ աւերածութենէն, սակայն լիբանանահայութիւնը անհրաժեշտօրէն պէտք ունի օգնութեան: Գիտենք թէ մեր դպրոցները, մամուլը եւ միութիւնները այս դէպքերէն առաջ ալ արդէն կարիքը ունէին աջակցութեան: Այժմ, երկրին տնտեսութեան ահաւոր քայքայումին հետեւանքով յառաջ եկած անգործութիւնն ու սղութիւնը ծանր, շատ ծանր կացութեան մատնած են, ուրիշներու կարգին նաեւ հայերը: Ուստի նիւթական շտապ օգնութեան կարիքը ունին Լիբանանի մեր եղբայրներն ու քույրերը: Ուրախ ենք որ Հայաստան օգնութեան փութացուց առանց յապաղումի: Արդ, Սփիւռքահայութիւնը, իր կարգին անհրաժեշտ է որ ձեռնարկէ շուրջ միջոցառումներու, օր առաջ օգնութիւն հասցնելու Լիբանանահայութեան, որ, համոզուած ենք թէ, այս փոթորիկէն ետք, պիտի վերականգնի անպայման նախկին ուժակալութեամբ, վերստանան իր համար Սփիւռքի ազգապահպանումի ճիգերուն սատարելու իր աւանդական առաքելութիւնը:

Օգնենք լիբանանահայութեան, որպէսզի արագ վերականգնի:

**Օ Գ Ն Ե Ն Ք Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ի Ն**

Անգամ մը եւս վայրագ բռնարարներու եւ տակաւ շարունակուող պատերազմի զոհ կ'երթայ բովանդակ Լիբանանը:

Արդարեւ, օդային ուժերու զոհ գացած են բազմաթիւ անմեղ մարդիկ, տեղաբնակ դարձած են անլիք 800 հազար հոգի, որոնք կարիք ունին ամէն տեսակի օգնութեան (հագուստ, սնունդ, դեղորայք եւ ապաստարան): մէկ խօսքով Լիբանան դարձած է «Աղէտի Երկիր»:

Լիբանանահայութիւնը եւս կ'ապրի դժուարին օրեր: Հայկական թաղամասերը կը դիմագրաւեն կենցաղային, առողջապահական, սնունդի ապահովման, ջուրի եւ էլեկտրական հոսանքի դժուարութիւններ, որոնք հոգալու պարտականութիւնը ստանձնած են մեր քաղաքական եւ քառասիրական կազմակերպութիւնները: Տնտեսական դժուարութիւններու եւ անգործութեան պատճառաւ սկսած է բազմապատկուել չքատու հայերու թիւը:

Հայկական կազմակերպութիւնները նաեւ օգնութեան ձեռք կ'երկարեն երկրի հարաւային շրջաններէն հայկական թաղամասերը ժամանած գաղթականներուն:

Հայկական կրթական քառասիրական Միութիւնը (Հ.Կ.Բ.Մ.) իր դարմանատուները եւ կրթական ու քառասիրական կենտրոնները առանց խտրութեան բացած է բոլորին առջեւ, օգտակար հանդիսանալով եւ հոգալով ժողովուրդի կարիքներուն:

Ռազմական գործողութիւններու աւարտէն ետք իսկ, երկար ժամանակ, լիբանանահայութիւնը պէտք պիտի ունենայ հայաստանի եւ սփիւռքի օգնութեան՝ իր գոյութիւնը պահպանելու եւ արտագաղթի ներքին կամ արտագաղթի հոգիները կամ իր կամեցածը:

Ուստի, կոչ կ'ուղղենք սփիւռքահայութեան՝ գործակալութիւնը զօրակցի աղէտահար Լիբանանի կարօտեալներուն եւ անյապաղ մարդասիրական օժանդակութիւն ցուցաբերել հայութեան:

Տուրքէ գերծ մեր գումարները հաճեցէք առաքել կողքի հասցէին.

**Հ.Կ.Բ.Մ. ԿԵԳՐՈՒԹԻՒՄ ԿԵԳՐՈՒԹԻՒՄ**

Please write your tax-deductible contributions to:

**A.E.B.U. - Lebanon Fund**  
 1060 North Allen Avenue  
 Pasadena, CA 91104  
 U.S.A.

FOR WIRE TRANSFERS:  
 Bank Of America  
 Account # : 02300-4230  
 Routing # : 026009593

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ ԸԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հայաստաննայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Հայ Ուսուցիչներու տարեկան գիտաժողովը տեղի ունեցաւ Նիւ Եորքի Առաջնորդարանի կեդրոնին մէջ՝ Յուլիս 16-23 օրերուն:

Այս տարի Թեմի ծուխերէն 14 ուսուցիչներ կը մասնակցէին տարեկան այս գիտաժողովին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի համալիրին մէջ: Մասնակցող ուսուցիչներուն ներկայացուցան Հայերէն լեզուի եւ մշակութիւն ուսուցման փոփոխութիւնը, ինչպէս նաեւ դասապատրաստութեան ծրագրում, դասարանի մէջ կարգապահութիւն, ուսուցչին վարուելակերպը, ուսուցման նոր մեթոտներ եւ Հայերէնի ուսուցումը՝ որպէս երկրորդ լեզու: Այս հաւաքին նպատակն էր ուսուցիչներուն տրամադրելի դարձնել այն միջոցները, որոնցով անոնք նոր սերունդը պիտի դաստիարակէին:

Առաջնորդարանի անձնակազմէն՝ խմբավար Խորէն Մէլիսանէնեանի եւ Կիրտա Պչաքճեանի կողքին՝ հետեւեալ դասախօսները իրենց մասնակցութիւնը բերին. Փրոֆ. Սեդա Տատոյեան, Դոկտ. Սոկրատ Պօյաճեան, Դոկտ. Մէրի Շամշոյեան-Օլսըն, Հոգ. Տ. Վահան Ծ. Վրդ. Յովհաննէսեան, Արժ. Տ. Ընձակ Ա. Քհնյ. Նալպանտեան, Փրոֆ. Ճէյմս Քուլթրէլաքոս, Դոկտ. Ճէյմս Ճէյքըրպարն, Տաթի Պենկոյեան, Յարութ Մըսրըլեան, Յովսէփ Մելքոնեան, Լուսին Գասպարեան, Ֆլորանս Աւագեան, Սուզըն Խրիմեան-Քըրպի, Վիքի Խըրըբեան, Ջարմինէ Պօղոսեան, Յովհաննէս Խոստեղեան, Սեդա Ճէպէճեան, Մարօ Փարթամեան եւ Արթուր Համալեան:

"I have been consistently concerned about the hypocrisy that has shown up on the Senate floor from my Republican colleagues on these two bills," said Dunn, who supports the Armenian bill. "The unfortunate continuing injustice here is that the handful of surviving victims of the illegal deportation of the 1930s still do not have an opportunity for their day in court."

Poochigian said the bills never should have been linked because "they are completely different issues." The Armenian bill, he said, deals with breaches of contract by private entities, rather than claims against the state of California.

# ՎԱՐՂԱՆԱՆՑ ՆԱԽՈՐԴՈՂ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

(ՆԱԽԱՏԵՍՆՈՒՌՄ Է ՎԱՐՂԱՆԱՆՑԸ 2007-ԻՆ ՆՇԵԼ ԸԱՍԱԶԳԱՅԻՆ ՍԵՑ ՇՈՒԲՈՎ. ԱՅՂ ԱՌԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ԶՕԴՈՒԱԾԱՆԱԻ Ա ՄԱՍՆ Է ՍՈՅՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ)

ԴՈՎՏ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ

Վարդանանց պատերազմը հինգերորդ դարի կեսերին տեղի ունեցած պատմական իրադարձություն է, որի լոյսն ու ջերմությունը գնալով մեծացավ հայ պատմության հոլովոցի մեջ: Վարդանանցը քրիստոնեական ճշմարտությունն ու հաւատը կեանքի բազմազան ոլորտներում սիրով գործադրելու ու Սուրբ Հոգու ներշնչանքով ղեկավարվելու հարուստ փորձառություն է: Այն մեսրոպաշունչ մշակութային-քաղաքական շարժման հարազատ ժառանգորդն է, մեսրոպատառ հայերէն մատենաների ոգով անուած հայ անհատի անդրանիկ ճախրանքն է դէպի յաւիտեանակամութիւն: Այն հայոց պատմութեան, մանաւանդ ազատագրական պայքարի պատմութեան, ամէն մի հանգրուանում իր գորակը ներկայութիւնը հաստատելով վերածուեց մի կողմից յարատեւող մի շարժման, իսկ միւս կողմից՝ դարձաւ հոգեւոր, հոգեկան, իմացական, քաղաքական, ռազմազինական ու կազմակերպչական այնպիսի արժէք, որ ձուլուեց հայ քաղաքակրթութեան բոլոր ծալքերի մէջ ու դարձաւ հայ մարդու իմացական կեանքի, նրա ներաշխարհի խորքերի եւ ազգային նկարագրի ու գիտակցութեան անսպառ աղբիւր:

Վարդանանց շարժումը ոչ պարսկամէտութեան, ոչ բիւզանդամէտութեան եւ ոչ էլ այդ երկուսի միասնարտութեան արգասիք է, թէեւ տեղի է ունեցել այդ իրողութեան պայմաններում: Այն վասակ Սիւնիի եւ Վարդան Մամիկոնեանի ու նրանց կողմնակիցների միջեւ մղուած նախարարական տների մրցակցութեան ու կուռի արգասիք է, թէեւ միջնադարին բնորոշ միջնախարարական յարաբերութիւններին բնորոշ կնիքն է կրում:

Վարդանանց շարժումը իր ծագումնաբանութեամբ կապուած է ինչպէս ժամանակի միջնադարին յարաբերութիւնների, այնպէս էլ հայկական ծրագրերի իրականացման հետ: Առաջին պարագային այն աղերս ունի մի կողմից Պարսկաստանի եւ Բիւզանդիայի միջեւ գոյութիւն ունեցող աւանդական հակամարտութեան, Հայաստանի ինքնուրոյն պետականութիւնը վերացնելու այդ կայսրութիւնների ծրագրերի, ու միւս կողմից՝ գրադաշտութեան ու քրիստոնէութեան միջեւ ծաւալուող մրցակցութեան եւ Պարսկական կայսրութեան մէջ կրօնական միատարրութիւն ստեղծելու Սասանեան իշխանութեան ծրագրի գործադրման հետ: Երկրորդ պարագային այն տրամաբանօրէն կապուած է Հայաստանի ամբողջականութեան ու նրա պետականութեան ինքնուրոյնութեան վերականգման ու ամբարտնաջան ազգաբնակչութեան հետ, որ վարում էին Արշակունիներն ու հայ նախարարները: Վարդանանց Շարժումը, սակայն, չսահմանափակուեց միայն դրանցով: Այն իր հոլովոցի մէջ առաջադրեց ու լուծեց շատ աւելի կարեւոր բազմաբնույթ տեսական ու գործնական հարցեր ու խնդիրներ:

## ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

3-5 դարերում արմատական փոփոխութիւններ տեղի ունեցան

Միջին ու Մերձաւոր Արեւելքում եւ կողակասում:

Հռոմէական կայսրութիւնը երկատուեց Արեւմտեան եւ Արեւելեան բաժինների: Վերջինս վերածուեց Բիւզանդական կայսրութեան՝ Կոնստանդնուպոլիս մայրաքաղաքով: Բիւզանդիան, թէեւ չունէր ազգային դիմագիծ, առաւելաբար շարունակեց յունական աւանդութիւններ՝ համեմուած արեւելեանով: Այն նաեւ իր կնիքը դրեց Արեւելքի Քրիստոնէական Եկեղեցու պատմութեան ընթացքի վրայ, քանի որ Կոնստանդնուպոլսի գահակալը նկատուած էր նաեւ եկեղեցու գլուխը: Շրջանի ազատատենչ ազգերը պայքարեցին իրենց եկեղեցիների անկախութեան եւ իրենց ներքին կեանքի ազգային դիմագիծի պահպանման համար: Երրորդ Տիեզերական Ժողովից յետոյ հայ եկեղեցին, այլ եկեղեցիների հետ միասին, հրաժարուեց ընդունել Բիւզանդիայի գահակալի նախագահութեամբ ու հրամանով հրաւիրուած այդ հաւաքի որոշումները: Պատահական չէ, որ 451-ին հայերը ոչ միայն պայքարում էին Սասանեան իշխանութեան դէմ, այլ նաեւ ինքնատիպ ու դէպի ապագան սլացող գաղափարական ճակատամարտ էին տանում Բիւզանդիայի դէմ՝ մերժելով Քաղկեդոնի ժողովի որոշումները: 387 թուականին, Շապուհ Գ.-ի օրօք շտամն ու ու Պարսկաստանը իրենց միջեւ բաժանեցին Հայաստանը ու շուտով ոչ-պարսկական Հայաստանը վարչականօրէն ձուլուեց Բիւզանդիայի մէջ, հայերը հասկացան, որ իրենց երկու հարեւաններն էլ իր արժէն, որ տիր սխտորից աւելի քաղցր չէ: Հակառակ այդ քայլերին չորրորդ դարից հայերի մօտ պահպանուեց քրիստոնէական պետութեան առաւելութիւն տալու, տուեալ դէպքում Բիւզանդիան գերադասելու միտումը: Բիւզանդիայի եւ միւս քրիստոնեայ պետութիւնների միջեւ առկայ հակասութիւնից փորձում էր օգուտ քաղել Պարսկաստանը, այնպէս ինչպէս Բիւզանդիայի ու Պարսկաստանի միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնից աշխատում էր օգտուել նաեւ Հայաստանը:

Այսպիսով, պարզ է դառնում այն, թէ ինչո՞ւ Վարդանանք իրենց պայքարում դիմեցին ոչ միայն հարեւան ժողովուրդների օգնութեան, այլ նաեւ Բիւզանդիայի: Միաժամանակ հասկանալի է դառնում, թէ ինչո՞ւ բիւզանդացիները ոչ միայն մերժեցին, այլ նաեւ պարսիկներին տեղեկացրին հայերի մտադրութեան մասին: Նշենք նաեւ, որ Բիւզանդիայի այդ քայլը նպաստեց Վարդանանց Շարժման երկատմանը, նրանց միասնութեան խաթարմանը, վասակ Սիւնիի խմբաւորման առաջացմանն ու գորացմանը: Վերջիններս գտան, որ առանց Բիւզանդիայի օգնութեան իրենք չեն կարող արդիւնաւոր պայքար մղել հօր Պարսկաստանի դէմ: Հիմքեր կան եզրակացնելու, որ վասակի կողմնորոշման հիմքը գլխաւորապէս քաղաքական էր, իսկ Վարդանանց կողմնորոշմանը՝ կրօնա-քաղաքական: Նշենք, որ Վարդանանց շարժման առաջացումից շուրջ 15 տարի առաջ Եգիպտոսի կողմից իր «Նեղ Աղանդոց» գրքում գտնուած էր, որ հայ ազատագրական պայքարի դրօշը հայ եկեղեցին ու նրա գաղափարա-

խօսութիւնն են: Մեծ հաւանականութեամբ Հայոց Մեծերի Պարսկաստանի ղեկավարութեան հասցեագրուած պատասխան նամակը, որտեղ քննական վերլուծութեան է ենթարկուել գրուանակամութիւնը (կամ գրուանական գրադաշտակաւորութիւնը) եւ որտեղ հայերը հրաժարուած են ընդունել պարսից կեղծ կրօնը կամ գրել է ինքը՝ Եգիպտոսի կողմից եւ կամ էլ այն շարադրուած է նրա նշուած երկից լայնօրէն օգտուելով:

Երրորդ դարի 20-ական թուականներին ներքին յեղափոխութիւն տեղի ունեցաւ Պարսկաստանում եւ իշխանութիւնը Պարթեւներին անցաւ Սասանեաններին: Սոյն փոփոխութիւնը գզալի տեղաշարժեր առաջացրեց ինչպէս երկրի ներսում, այնպէս էլ ողջ տարածաշրջանում եւ այլ երկրների հետ, այդ թուում նաեւ Հայաստանի հետ, Պարսկաստանի ունեցած յարաբերութիւններում:

Առաջին դարի կեսերին, Արտաշեսեանների գահի տապալումից յետոյ, Պարսկաստանն ու Հռոմը եկան այն փոխդիմաց, որ Հայաստանի գահին պէտք է, հայ նախարարների համաձայնութեամբ ու համագործակցութեամբ, նստի Պարթեւ մի ազնուական, որը պէտք է թագադրուի Հռոմի կայսեր կողմից: Այսպիսով սկսում է հայ Արշակունիների իշխանութիւնը պարսից Վասնոս Բ.ի որդի Տրդատ Ա.ով: Պարսկաստանում Պարթեւների իշխանութեան տապալումով վատթարանում են յարաբերութիւնները Հայաստանի եւ այդ երկրի միջեւ, քանի որ Սասանեանները հայ Արշակունիներին մէջ տեսնում են իրենց սպառնացող վտանգ: Հայ Արշակունիներն էլ, իրենց հերթին, աշխատում են հարաւորին չափ խորացնել Պարսկաստանից տարբերուելու եւ հայկականալու այն քաղաքականութիւնը, որ սկսուել էր Տրդատ Ա.ով:

Պարթեւների գրաւում տարածքների վերնախաւը յոյներ էին եւ նոր տէրերը ստիպուած էին յարմարուել նրանց, եթէ ցանկանում էին իրենց իշխանութիւնը պահպանել: Պարթեւական տիրապետութեան շրջանում անցելի հելլենիստական քաղաքները պահպանեցին իրենց նախկին իրաւունքների զգալի մասը: Ընդհանրապէս կայսրութիւնը ապակենտրոնացուած բնույթ ունէր: Թոյլ էին կապերը կայսրութեան տարբեր մասերի միջեւ: Տեղական իշխանաւորներին կարեւոր դերեր էին վերապահուում: Շահին Շահը պարտաւոր էր հաշուի նստել նրանց հետ: Նրանք իրաւասու էին դրամ հատել: 387-ին Սասանեան իշխանութեան կազմում մի մաս դառնալով եւ 428-ին, Վահրամ Ե. Գոռի (որի մայրը՝ Շուշանուհի, հրեայ էր) օրօք, տապալելով վերջին հայ Արշակունի թագաւորին՝ Արտաշէս Գ.-ին, Սասանեանները Հայաստանը վերածեցին մարզպանութեան: Հայաստանը սկսեց ենթարկուել Սասանեան իշխանութեան կենտրոնացման քաղաքականութեան: Սասանեանները հետեւելով հին Հռոմին ցանկանում էին, որ իրենց բոլոր հպատակները պաշտեն այն աստծուն, որին պաշտում էր Շահին Շահը: Քանի Սասանեանները ընդունել էին գրուանականութիւնը, նրանք պարտադրում էին, որ իրենց հպատակ բոլոր ժողովուրդները պաշտեն գրուանին: Այս պատճառով էլ Միհրնէրսեհ Վերուկը Հայաստանեան մարզպանութեան ղեկավարներին յղած նամակում գրում է. «Իմացած եղէք, որ ամէն մարդ, ով բնակուած է երկնքի տակ եւ չունի Դեւիմագդեղն կրօնը, նա խուլ է եւ կոյր եւ Հարմանիի

(չարութեան աստուծոյ՝ Գ. Ս.) դեւերից խաբուած»: Ապա քրիստոնէութիւնը քննադատելուց ու այն հռոմէացիների մոլորութիւն համարելուց յետոյ, նա աւելացնում է. «Ինչ կրօն ձեր տէրն (Շահին Շահը՝ Գ. Ս.) ունի, դուք էլ նոյնն ունեցէք՝ մանաւանդ որ աստուծոյ առաջ էլ ձեզ համար հաշիւ պիտի տանք»: Նման բովանդակութեան գրութիւններ են ուղարկուել նաեւ Վրաստանի, Աղուանքի եւ այլ մարզպաններին: Նկատենք, որ Տրդատ Գ., քրիստոնէութիւն ընդունելուց առաջ, իր դպիր Գրիգորին նոյնպէս ստիպում էր, որ պաշտի այն աստծուն, որն ինքն է պաշտում:

Ձրուանական գրադաշտակաւորութեան մասին մեզ հասած հնագոյն տեղեկութիւնը գալիս է Եւդեմոս Ռոդոսացու (370-300) «Աստուածաբանութեան Պատմութիւն» գրքից, որտեղ նա գրում է, որ պարսիկները Տարածութիւն/ժամանակը դիտում են որպէս նախակազմական «հայրը» մրցակիցներ Լոյս-Արամագրին եւ Խաւար-Արիմանուսին: Աւետաշում լրիւ բացակայում է Ձրուանի պաշտամունքի մասին որեւէ տեղեկութիւն, թէեւ այդ գրքի մեզ հասած խմբագրութիւնները սասանեան դարաշրջանին են պատկանում:

Հաւաստի է այն, որ գրուանականութիւնը օրինականացուեց Սասանեան դարաշրջանում (226-651), եւ որ Շապուհ Ա.-ի (241-272) օրօք էր, որ յունական ու հնդկական գաղափարներ ներթափանցեցին նրա մէջ: Եթէ Մագդեականութիւնը առաւելաբար տարածուած էր կայսրութեան հիւսիսում ու արեւելքում, ապա Ձրուանի պաշտամունքը աւելի ընդունուած էր երկրի հարաւում եւ արեւմուտքում՝ յունական ու բաբելական մշակութային ազդեցութեան գոտում, մերձ Հայաստանեան շրջաններում: Սասանեան շրջանում գրուանականութիւնը պաշտօնականանալով գրադաշտութեան միւս ձեւերը հրապարակից դուրս չմղուեցին: Որոշ գիտնականներ հաւանական են համարում այն վարկածը, որ գրուանականութիւնն ու մագդեականութիւնը գործել են գուզահեռ: Պարսկաստանի իսլամացումից յետոյ, 10-րդ դարից յետոյ, առաջինը ի սպառ վերացել է, երբ երկրորդը շարունակել է իր գոյութիւնը:

Սասանեան շրջանում, երբ պարսկական պալատի կողմից հովանաւորուած էր գրուանական գրադաշտակաւորութիւնը, այդ կրօնի մասին գրուած լաւագոյն քննական երկերից է Եգիպտոսի կողմից գրուած Վրաստանի արտադրուած թիւնն է ունեցել դեռեւս Վահրամ Ե.-ի օրերին, երբ սասանեանները գահընկեց արեցին հայ Արշակունի Արտաշէս Գ. արքային: Եգիպտոսի կողմից Նման խորթաբանաց իմաստասէր կրօնականներ ու ազգային գործիչներ գգում էին մօտալուտ թշնամական ալիքը ու ազգը գինում էին համապատասխան գաղափարախօսութեամբ, որը մեծապէս նպաստեց Վարդանանց կոփուածութեան ու յաղթանակին: Վահրամի որդի Յագկերտ Բ.-ն (438-457) սասակացրեց հակաքրիստոնէական պայքարը ու հրահրեց Վարդանանց շարժումը: Աւարայրի ճակատամարտում հայերը ժամանակաւոր պարտութեան մատնուեցին: Բայց երկարատեւ պար-

ՏԵՍԱԿԵՏ

«ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ» ՕՐԸՆԵՐԳԻ ԸՆԴԻՆԱԿԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԸԱՐՑՈՒ

ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ (ԵՐԱԺՇՏԱԳԵՏ)

Տարօրինակ, սակայն իրաւ: Հայ ժողովուրդի մէջ ամենատարածուած ու արմատաւորուած «Մեր Հայրենիք» երգը, որ մինչեւ իսկ Հայաստանի Առաջին եւ Երրորդ Հանրապետութեանց օրհներգն ու քայլերգը դարձած է, առաջին հրատարակութեանէն ջարդ, 145 տարիներ ետք, հակառակ բազում ուսումնասիրութիւններու, տակաւին հարցականի տակ կը մնայ անոր հեղինակային պատկանելիութիւնը:

Վերջերս, հետաքրքրութեանց ալիքները անգամ մը եւս բարձրացած են: Զանազան թերթերու մէջ կրկին անգամ փորձեր կ'ըլլան ճշդելու «Մեր Հայրենիք»-ին հեղինակը:

Իրենց այս ճիգերուն մէջ հետաքրքրական է տեսնել զիրար ջրող կարծիքներ, պատմական որոշ իրողութիւններու անտեսում, ինչպէս նաեւ շահեկան, կարեւոր եւ նկատառութեան արժանի կէտեր:

Հետաքրքրութեանց այս հոսանքը, կարծէք, զիս ալ իր մէջ ներգրաւելով ստիպեց որ արտայայտուիմ մի քանի կէտերու մասին:

Յաջորդական երկու յօդուածներով պիտի խօսիմ նախ՝ երգի բնագրի հեղինակային ինքնութեան մասին, ապա՝ երգի երաժշտութեան հեղինակային ինքնութեան մասին եւ արդեօք ժամանակն է ունենալու նոր քայլերդ մը նիւթին շուրջ:

Առաջին նիւթին՝ «Մեր Հայրենիք» երգի բնագրի հեղինակային ինքնութեան մասին գրելու առիթ

տուին Գալիֆորնիոյ «Նոր Կեանք» շաբաթաթերթի Մայիս 18, 2006 թուին մէջ երեւոյղ Դոկտ. Ա. Զելեպեանի «Մեր Հայրենիք» հայոց Ազգային Քայլերգին հեղինակը՝ Խտալացի Աղջիկ մըն է» վերնագրով յօդուածին առաջին երկու պարբերութիւնները:

Այս խորագիրը անհունօրէն ուրախացուց զիս, քանի որ ինչպէս 1998ին հրատարակուած «Հայ Յեղափոխական Երգերուն Տեղը Հայ Երաժշտութեան Պատմութեան մէջ» գրքի մէջ, էջ 33-37, խօսելով «Մեր Հայրենիք»-ի մասին ըսած էի. «Ինծի համար պատանեկութեանս շրջանէն հարց էր եղած անոր ազգային պատկանելիութիւնը»:

Ուրեմն, կրնաք երեւակայել անձկութիւնս:

Մեծ յափշտակութեամբ սկսայ կարդալ յօդուածը իմանալու համար հեղինակին ով ըլլալը: Առաջին իսկ պարբերութեանէն յուսախաբութիւնս սկսաւ ծայր առնել եւ մինչեւ յօդուածին վերջաւորութիւնը ակնկալութիւնս յօդս ցնդեցաւ, քանի որ այնտեղ նոր յայտնութիւն մը կամ յայտնութեան նշոյլ մ'իսկ չկար ինծի համար: Ինչ որ ըսուած էր, բազմիցս խօսուած ու գրուած է Հայ մամուլին մէջ, նոյնիսկ աւելի հաւատարիմ մնալով պատմութեան:

Ինչո՞ւ յուսախաբ եղայ:

Յուսախաբ եղայ անոր համար, որ Մոսկուա հրատարակող Ստեփաննոս Նազարեանի «Հիւսիսափայլին»-ին մէջ 1861ին, առաջին անգամ հրատարակուած ու իր վայելած ժողովրդականութեան շնոր-

հիւ բազմիցս վերահրատարակուած Հայ մամուլին մէջ, իսկ 1918ի Հայաստանի Առաջին Հանրապետութեան պետական օրհներգը դարձած երգին՝ «Մեր Հայրենիք»-ին հեղինակային պատկանելիութեան լուրջ հարցով զբաղելու համար պէտք չէ երկրորդական աղբիւրներու դիմել, ինչպէս այս պարագային Դոկտ. Զելեպեան դիմած է 1917ին հրատարակուած օրինակի մը: Ան պէտք չէ երբեք բաւարարուած ըլլար միայն այդ օրինակով: Որովհետեւ, ժամանակի ընթացքին երկ մը կրնայ փոփոխութիւններ կրել: Ու այդպէս ալ է մեր շօշափած նիւթի պարագան:

Ըսածս հաստատագրելու համար բերեմ միայն եօթը տպագրութեան օրինակներ:

1. 1868ին, Ս. Պետերբուրգ հրատարակուած Մ.Մ. Միսնսարեանի «Քնար Հայկական» երգարանին մէջ՝ «Խտալացի Աղջկայ Երգ 1859 թուականից», 18 տուն ստորագրուած՝ Կոմս Էմմանուէլ (Մ. Նալբանդեան): Զօդէն, Մայնի Վերա, Ֆրանկֆուրտի մօտ: Հիւսիսափայլ, 1861, No. 11, Ե.Ե. 400-402:

2. 1899ին, Նիւ Եորք հրատարակուած Մ. Մարգարեանի «Սրինգ Կամ Նոր Երգարան Ազգային» երգարանին մէջ՝ «Երգ Խտալացի Աղջկան» 18 տուն, ստորագրուած՝ Թարգմ. Մ. Նալբանդեան:

3. 1901ին Պոսթոն հրատարակուած Տիգրան Տէրոյեանի «Վազգէն» երգարանին մէջ՝ «Հայ Աղջկայ Երգը», 17 տուն, ստորագրուած՝ Մ. Նալբանդեան:

4. 1917ին, Հոպոքըն, Նիւ ձըրքի հրատարակուած Պետրոս Ռ. Թորոսեանի «Հայ Ամերիկեան Ազգային Նոր Երգարան»-ի, Ա. հատորին մէջ՝ «Խտալացի Աղջկան Եր-

գը», 18 տուն, ստորագրուած՝ (Թարգմ.) Մ. Նալբանդեան:

5. 1921ին, Պոլիս հրատարակուած Յակոբ Սարգիսեանի «Կիլիկիա Երգարան»-ին մէջ՝ «Հայ Աղջկան Երգը», 18 տուն, ստորագրուած՝ Միքայէլ Նալբանդեան:

6. 1969ին, Պէյրութ հրատարակուած Տպարան-հրատարակչատուն Մշակի «Յեղափոխական Եւ ժողովրդային Երգեր» երգարանին մէջ՝ «Մեր Հայրենիք», 5 տուն, ստորագրութիւն չկայ:

7. 1999ին, Էջմիածին, հրատարակութիւն Հաւատք եւ Ժառանգութիւն կազմակերպութեան «Երգարան»-ին մէջ՝ «Մեր Հայրենիք», 4 տուն, խօսք Մ. Նալբանդեանի:

Ինչպէս կը տեսնէք, բնագրի ծաւալի տեսակէտով, մեծ տարբերութիւն կայ առաջին տպագրութեան եւ վերջին տպագրութեան միջեւ, իսկ հեղինակի ինքնութեան տեսակէտով, կը տեսնենք որ 1861ին, «Հիւսիսափայլ»-ին մէջ առաջին անգամ հրատարակուած բնագրին տակ չէ ստորագրուած որպէս թարգմանութիւն: Կը տեսնենք նաեւ վերնագրի փոփոխութիւններ:

Այս բոլորը, սոյն հարցով զբաղողներուն կը թելադրեն անպայմանօրէն դիմել հնագոյն օրինակներուն:

1917ի հրատարակութիւնը արդէն իսկ կորսնցուցած է բնագրի նիւթին բովանդակութիւնը եղող դէպքին ծննդեան հաստատագիրը հանդիսացող՝ «1859» թուականը եւ ստորագրութեանէն ելած են ուշադրութեան արժանի տեղեկութիւններ, ինչպէս՝ հեղինակին գրչի անունն ու հասցէն:

Մ. Նալբանդեան, 1859ին Խտալ-

Շարք էջ 19

**Wahib's**  
MIDDLE EAST RESTAURANT  
الشرق مطعم  
MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

**CATERING FOR ALL OCCASION**

FAMILY ENTERTAINMENT  
BANQUET HALL  
EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT  
INTERNATIONAL ~ ARABIC  
CALL FOR RESERVATION

**BELLY~DANCING**

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.  
TEL 626-281-1006 626-587-1048  
FAX 626-281-3641

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL( 626 ) 795-4493

# ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ՈՂՋՈՅՆ

## ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Մարիամ Մազազդենացի էր եղել Եբրայացի այն կոյսի անունը, որը Աստուծոյ պատգամով երկնել էր նրա որդուն, որին էմմանուէլ Յիսուս-Փրկիչ էին անուանել: Մարդացած Որդի Աստուծոյ որի բնութեան մէջ արեւելքի հին եկեղեցիները Հայաստանեայց Առաքելական, Ասորի ու Ղպտի, ճանաչել էին միայն Աստուածայինը: Յիսուս Քրիստոս (Օծեալ) երկիր մուտք էր եկել տիեզերքի իմաստութիւնը ճամբելու մարդկանց, աւետելու՝ սիրոյ, խաղաղութեան, բարութեան, հաւատքի, յոյսի խորհուրդը: Երկիր մուտք կի պտոյտի առաջին հազարամեակի սկիզբին՝ աշխարհը ամբարիշտութեան, անբարոյականութեան, զեխութեան, այլամերժութեան յորձանուտն էր ընկղմուած եղել եւ Յիսուս իր տիեզերական իմաստութեամբ քաղաքակրթութեան մի նոր դարաշրջան սկզբնաւորեց, որի մարմինը փարիսեցի դպիրները թէեւ խաչեցին, սակայն իր սիրոյ իմաստութիւնը չկարողացան սպաննել:

Ըստ Ղուկաս Աւետարանիչի Տիրամայր Մարիամը եղել է Դաւիթի ցեղից Յովակիմի ու Աննայի դուստրը, որին երեք տարեկանին ընծայած էին եղել տաճարին: Յովակիմը իր ճանապարհորդութեան ընթացքին այցելած է եղել այդ տաճար եւ ընդունուած կարգի համաձայն տարբեր իրերի հետ դրուած իր մուրճը ընտրած է եղել Մարիամ կոյսը, որի հետ նշանուել է: Մարիամը անարատ յղիութեամբ Տիրամայր եղաւ, մայրըրը սիրոյ խորհուրդի ոգին, բնութեան յաւերժութիւնն են, մայրերը օրհնութեան աղօթքի համանուագ են, պատարագ են: Մարիամը ծնել էր նաեւ ուրիշ գաւազներ, որոնցից Յակոբը, Յիսուսի աշակերտներից մէկն էր եղել: Պատմիչները աւանդել են, որ Մարիամի պաշտամունքը առնչուած է եղել բնութեան զարթոնքը ու պտղաբերութիւնը խորհրդանշող դիցաբանութիւնի՝ Իգիտա, Մա, Իշտար եւ ինչու չէ նաեւ հեթանոս հայերի մայր Անահիտ դիցուհու պաշտամունքների ազդեցութեանը: 431 թուականի

Եփեսոսի Քրիստոնէական Տիեզերական ժողովը Մարիամին հուշակել էր որպէս Աստուածամայր, որի երկրպագութիւնը այնուհետեւ տարածուել է Քրիստոնէական աշխարհում:

Հայերը Մարիամի փառաբանման տօնը անուանում են՝ «Վերափոխումն Սուրբ Աստուածածնի» եւ այն տօնում Օգոստոս ամսուայ 12ից 18ի միջեւ ինկած առաջին կիրակին: Հայոց գրաբար ոսկեդարի լեզուով «Վերափոխումն» նշանակում է վեր, դէպի երկինք փոխադրուել, կամ ննջում ու մահ: Ըստ Աւետարանիչների վկայութիւնների, երեք օրեր շարունակ Գեթսեմանիի ձորակի մօտիկ Մարիամի գերեզմանին երկինքն էր իջել իր լոյս աստղերով, հրեշտակները արեւը որպէս ջահ բռնած, Սաղմունքով ու երգերով փառաբանել էին նրան: Բարթողիմէոս Առաքելը ներկայ եղած չի եղել Մարիամի թաղման արարողութեանը: Մարիամը կանխազգալով որ նա շատ պիտի տխրէր, իր կենդանագիր նկարը տալիս է իր ինամատար Յովհաննէս Առաքելին յետագայում այն նրան յանձնելու համար: Բարթողիմէոսը վերադարձին ընդունում է նկարը, սակայն Մարիամի դէմքը վերջին անգամ տեսնելու համար ինդրում է բացել նրա գերեզմանը: Ի գարմանս բոլորի այն դատարկ էր եղել, Մարիամը «Վերափոխուած» է եղել՝ երկինք բարձրացել իր որդու մօտ: Բարթողիմէոս Առաքելը Մարիամի նկարը իր հետ Հայաստան էր տարել եւ այն պահած եղել Անձեւաց վայրը, որտեղ վանք էին կառուցել եւ նկար ամփոփել պատի մէջ:

Հայոց Հայրապետները, Յիսուսի պատգամի խորհուրդը յաւերժացնելու համար խաղողի օրհնութեան «Խաղող Օրհնէք»-ի ծիսակատարութիւնը սահմանել էին կատարելու Մարիամ Աստուածածնի տօնի օրը, որ հնձաններում եռացող գինին հոսի իրենց սրտերում որպէս արիւնը նրա Որդու, որ հայոց բանաստեղծների հոգիներին ներշնչման հուր կաթի: Աստուած էր Նոյին որթատունկ տուել որ այն տնկէր Արարա-

տի ստորտին: Հայերը խաղողը համարել են տիեզերական արարչութիւն, եւ աշխարհում միայն իրենք են այն օրհնում՝ որպէս Յիսուսի արեան խորհրդանիշ, որպէս իրենց հեթանոս աստուածների ըմպելիք, ինչպէս նաեւ օրհնուէին այգիների բերքառատութիւնը եւ այնտեղ արդէն հասունացած խաղողի բերքի աղէտներից պահպանումը:

Տրդատ իմաստուն, դիւցազնական քաջութեամբ թագաւորն հայոց, իր երկրի անկախութիւնը, ինքնուրոյնութիւնը դրացի երկու հզոր պետութիւնների ազդեցութիւնից գերծ պահելու համար՝ արտօնել էր իր կողմից արգելափակուած Գրիգոր Պարթեւին հայոց աշխարհում քարոզելու քրիստոնէական նոր հաւատքի ուսմունքը: Գրիգորը քանդել էր հայոց տիեզերական հաւատքի տաճարները՝ Աշտիշատի, Բագրեւանդի, Բագարանի մեհեանները եւ նրանց լացող որմերով կառուցել էր նոր հաւատքի եկեղեցիներ՝ էջմիածին, Մշոյ Սուրբ Կարապետ, Առաքելոց, Վարազդ որպէսզի հայերը շարունակէին գնալ իրենց հին աստուածների մեհեանների վայրեր եւ ժամանակի ընթացում դաւանէին նոր պաշտամունքը: Արմէն-Հայերը իրենց հին աստուածների մեհեանների շուրջ քաղաքներ էին հիմնել, ինչպէս՝ Բագարան, Բագարեւանդ, որոնց սկզբնական «Բագ» արմատը ուսերէն «Bog» բառի նմանութեամբ Հնդեւրոպական մայր լեզուի Սան Սկրիտի, «Աստուած» իմաստի բառն է: Հայերը իրենց տոմարի առաջին ամսի՝ Նաւասարդի երկրորդ տասնօրեակի առաջին օրը, այժմեան Օգոստոս ամսուայ 11ին, հին աստուածների մեհեանների հրապարակներում, սրբազան Արածանիի ակունքների մօտ տօնախմբել էին իրենց Նոր Տարին: Հայոց հին աստուածների մեհեաններում փառաբանուած՝ մայրութեան, պտղաբերութեան, ջրի, ծաղկունքի, սիրոյ,

լոյսի, ռազմի, կրակի բոլոր տօներին Գրիգոր Պարթեւը նոր հաւատքի պատմութեաններ էր եղել, ինչպէս Նաւասարդեան տօներին «Վերափոխումն Սուրբ Աստուածածնի» տօնը:

Հայերը, տիեզերքի պաշտամունքի հազարամեակների տօնակատարութիւնների յուշերի կրակը անթեղած իրենց հոգիներում, երկիր մուտք կի ամէն պտոյտին՝ Նաւասարդը որպէս խարոյկ բոցավառել են իրենց շէնքերում, այն տարել Պարսկաստան, Եւրոպաներ, ովկիանոսից այն կողմի Քոլումպոսի Նոր Երկիր: Արիացի Արքայից Արքայ Մեծն Տիգրանի հետ այն բերին Ջեւսի «Մուսիս» դուստրերի իջեւանած լեռ, Մուսա Լեռ, որի գագաթին փռած ողիմպոսի լոյսը հեթանոսական արեւներ էր պոթկացել նրանց սրտերում: Ողիմպիական կրակով վառուած Մուսա Լեռ, որի լանջերին ծաղկած վեց շէնքերը հողը մայրացրին ցորեանի արտերով, ծառեր, ծառեր տնկեցին որպէս խաչեր իրենց նախնիներին: Մայրացած հողը գրկած, աստուածների հուրով վառուած գագաթին՝ թշնամու յոխորտանքը այլեցին: Արիացի Մուսա Լեռցիները նոր հաւատքի տօները կատարեցին, սակայն նրանց գուգահեռ տօնախմբեցին նաեւ կրակի, ջրի, ծաղիկի, պտղաբերութեան, մայրութեան փառաբանումը: Մուսա Լեռը իրենց թիկունքներին պահած վեց գիւղերը Մարիամ Աստուածածնի վերափոխման տօնը կատարում էին ամենաբարձրադիր լանջում բազմած հէքիթային Պիթիսա գիւղում: Յովհան Ոսկեբերանի աւերուած վանքի մօտի Ս. Աստուածածին եկեղեցում պատարագում էին ու լոյս վառում Մարիամի անբիծ հոգու յաւերժութեանը: Եկեղեցու բակում իրենց աւանդական կերակուր՝ մեծ կաթասներով հարխայ էին եփում, այն բաժանում Մարիամի Որդու անմահութեանը որպէս

Շարք էջ 16

**ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ**  
**ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES**  
**Նախաձեռնութեամբ Գրականութեան եւ Արուեստի Բաժանմունքի**

**ԳՐՔԻ ԾՆՈՐՀԱՆԴԷՍ**  
**Նուիրուած Պատմաբան**  
**Յովիկ Ներսիսեանի գրքին՝**  
**«Հայկական Լեռնաշխարհը ըստ Զրադաշտն ու իր Աւետան»**


**Գիրքը կը ներկայացնի**  
**Դոկտ. Հրաչ Վարդանեան**

**Սրտի խօսք՝**  
**Ներսէս Տ. Մեսրոպեան**

**Կիրակի, Սեպտեմբեր 17, 2006**  
**Երեկոցեան Ժամը 6:30ին**  
**Իրանահայ Միութեան Կենտրոնատեղիում**  
**320 W. Wilson Ave. Glendale, CA**  
**Հանդիսութեան աւարտին՝ Հիւրասիրութիւն**

**Մուտքը ազատ**

**ՃԱՇԿԵՐՈՅԹ - ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**  
**Ի ՆՊԱՍՏ՝ ԵՐԵՒԱՆԻ**  
**ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ**  
**ԿԱՐԻՔՆԵՐՈՒՆ**



Կազմակերպութեամբ՝  
 Փասատինայի Դայ Դամայնքի  
 Ոստիկանութեան Խորհրդատու Մարմնին (P.A.P.A.C.)  
 Գովաճաւորութեամբ՝  
 Փասատինայի Ոստիկանութեան  
 Դամոյիսավարութեամբ՝  
 Իրաւաբան Մարք Կիրակոսի  
 Գլխաւոր Բանախօս՝  
 Պերնարտ Մէլքեան, Փասատինայի Ոստիկանապետ

Շարք, 7 Գոլտենբեր, 2006  
 Փասատինայի Դայ Կեդրոնի Սրահին Սէջ  
 740 E. Washington Boulevard, Pasadena, California 91104  
 ԸՆԿերային ժամ 7-ին, Ընթրիք եւ Յայտագիր 8-ին  
 Մուտքի նուէր՝ Աճժի Դամար 100 Տոլար  
 Տոմսերու եւ Տեղեկութեան Դամար Գեղածայնել  
 Արա Սահակեանին (626) 665-9772 կամ  
 Գրիգոր Սաքամեանին (626) 794-7942  
 P.A.P.A.C.-ի Եղած Լուիրատուութիւնները Տուրք Չեղծ են

# ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱԽՈՐԴՈՂ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Շարունակում է իջ 13-էն

տիգանական պատերազմում վերջնականապես յաղթանակեցին 483-ին, երբ Պերոզ Ա.-ն (459-484) հարկադրված եղաւ Նուարասակի դաշնագրով ընդունել Վարդանանց բոլոր պահանջները:

Զրուանական վարդապետութիւնը, ի տարբերութիւն բուն գրադաշտականութիւնից, դուալիստական էր (ընդունում էր երկու սկզբնական սկզբունքների, գոյերի գոյութիւնը), պաշտպանում էր չարի նախաորոշումները եւ ճակատագրականութեան սկզբունքները: Հայ հակազրուանականները հիմնադրում էին Միակի, մէկ արարիչի գաղափարը: Գտնում էին, որ չարը մարդկային գործունէութեան, նրան տրուած ազատ կամքի սխալ գործադրման արդիւնք է: Հայերը ապացուցում էին, որ մարդկային պատմութիւնը, իրաւագիտութեան ու բարու վարձատրուցման փաստը հերքում են ճակատագրականութեան վարդապետութիւնը, որը մարդուն պատկերում է որպէս անտարբեր, անգործունեայ ու կենդանու նման իրականութեան յարմարող էակ:

Որոշ հեղինակներ ելնելով այն փաստից, որ առաջին դարի կէսերին հայ գահին տիրացան Պարթեւները եզրակացնում են, որ հայ Արշակունեաց շրջանի մշակույթն ու քաղաքականութիւնը իրենց խորքով դարձան պարսկական, որ հայ մշակույթը դարձաւ պարսկականի տարբերակ: Հետեւաբար հիմքեր չկան Վարդանանց շարժման նման հակապարսկական մի շարժման առաջացման համար: Այս հարցադրումը սխալ է ինչպէս տեսական մօտեցումներ, այնպէս էլ գործնական, պատմական: Հիւսիսային ծովի վայրիկները (Viking) հաստատուեցին Ֆրանսայում՝ Մէնի ափին, ֆրանսերէն սովորեցին, նոր մշակույթ ձեռք բերեցին ու որպէս այդպիսին արշաւեցին Անգլիա ու հիմնեցին անգլիական թագաւորութիւնը: Երկար ժամանակ անգլիական պալատը ֆրանսախօս էր: Գիտնականները գտնում են, որ անգլիական քաղաքակրթութեան մէջ առկայ է վայրիկեան ու ֆրանսական ազդեցութիւն: Նրանք չեն պնդում, որ անգլիական մշակույթը վայրիկեանի կամ ֆրանսականի տարբերակ է: Նոյն տրամաբանութեամբ էլ մենք մօտենում ենք մենք հայ մշակույթին: Հայ եւ պարսկական մշակույթի ընդհանրութիւնը սկսում է դեռ այն օրից, երբ նրանք որպէս հնդեւրոպական լեզուով խօսող ցեղեր տրոսուեցին մայր լեզուից, սկզբնական հայրենիքում: Հայերը ամէնից սերտ յարաբերութիւն ունեին պարսիկների ու յոյների հետ: Բայց նրանք զարգացան տարբեր ուղղութիւններով ու դարձան տարբեր ազգեր՝ շարունակելով բազմաբնույթ յարաբերութիւնները:

Տրդատ հայ գահին տիրացաւ ոչ թէ հայ ազնուականութեան կամքին հակառակ, այլ նրանց համաձայնութեամբ ու օգնութեամբ: Հակառակ նրանց կամքին գահակալ նշանակելու բոլոր նախորդ փորձերը տապալուեցին: Այս պատճառով էլ Տրդատի նախարարների մեծամասնութիւնը հայկական ծագում ունէին: Մի մասն էլ իր գինակիցներից էին: Այս նոյն տրամաբանութեամբ էլ հայ Արշակունիները գիտակցօրէն նպատակեցին երկրի քաղաքակրթութեան հայացման: Պարսկական պարթեւական իշխանութեան

տապալումից յետոյ նրանք վճռական դեր խաղացին Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն ընդունելու գործում: Քրիստոնէութեան ընդունմամբ հայ մշակույթը վճռական քայլ կատարեց պարսկականից տարբերութիւնը ստեղծելու: Հայ Արշակունիները ոչ միայն նպատակեցին քրիստոնէութեան ընդունմանն ու տարածմանը, նրա աւետարանական գործունէութեան ծաւալմանը, այլ նաեւ ազգայնացրին հայ եկեղեցին: Նրանք հայ եկեղեցին բիզանդական կայսրերի նման իրենց ստորադաս չնկատեցին: Նրանք երկուսին հաւասար հաստատութիւն երկրի հոգեւոր, իմացական, իրաւական ու կրթական զարգացման, իսկ միւսը՝ քաղաքական, տնտեսական, ռազմական ու տնտեսական զարգացման համար: Երկուսը միասին պատասխանատու էին երկրի միասնութեան ապահովման համար: Հայ Արշակունիները նպատակեցին հայ եկեղեցու ինքնուրոյնութեան, նրա վարչական ու տնտեսական հզօրացման:

Հայ Արշակունիները վճռական գործ կատարեցին հայ քաղաքակրթութեան արմատական վերակերտման, հարստացման ու ազգայնացման ասպարէզում, երբ պետական մասնակցութիւն ունեցան հայ տառերի գիւտին, թարգմանչաց շարժման ու մեսրոպատառ հայ դպրութեան ծաւալման գործում: Հայ եկեղեցու ու մտաւորականութեան հետ համագործակցելով Հայ Պարթեւ պետականութիւնը անմասն չմնաց հայ նոր մշակութային քաղաքականութեան կերտման, դրա գործադրման ու Աստուածաշունչի թարգմանութեան գործում: Հայ պարթեւները կերտեցին ոչ թէ պարթեւական, այլ հայ քաղաքակրթութիւնը, հայ տառագիր գրաւոր մշակույթը, հայու նոր կերպարը: Այդ բոլորը միասնաբար հիմք հանդիսացան հայու ազգապահպանման, հայ մշակույթի յարատեւ զարգացման համար, հայ նոր մարդու անհատականութեան կերտման համար: Դրանք դարձան հետագայ հայ քաղաքակրթութեան հիմքը: Դրանց վրայ խարսխուեց նաեւ Վարդանանց շարժումը, Վարդանանց հերոսների կերտումը: Վարդանանց հերոսները Մեսրոպատառ դպրոցների ասներն էին:

Վարդանանց Շարժման նպատակեցին նախորդ շրջանում մարզապանական Հայաստանում տեղի ունեցած կազմակերպչական, վարչական ու ասպտամբական ընդլիզումները: Վարդանանք օգտուեցին Ներսէս ծիծրակացու եւ Ապրսամ Սպանտունու ղեկավարած 419-421 ասպտամբութեան փորձից: Երկրի քաղաքական ու բարոյական մթնոլորտի վրայ դրական ազդեցութիւն ունեցաւ որոշ երախտաւորների պաշտօնակոչումը: Սուրբ Սահակ Պարթեւ Կաթողիկոսը վերադարձաւ Տիգրանից, թէեւ նրան հակում էր Շմուկէլը: Սուրբ Մեսրոպ Մաշտոց նախ նշանակուեց Վաղարշապատի Սուրբ Կաթողիկէ եկեղեցու վերակացու: Նախարարները նրան յանձնեցին Կաթողիկոսի պատիւը: Վեց ամիս անց Մեծ Վարդապետը վախճանուեց ու աթոռը վստահուեց Սրբ. Սահակի ու Սրբ. Մաշտոցի սան Յովսէփ Հորոմեցուն: Հապտապետ նշանակուեց Վահան Ամատունին, իսկ Վարդան Մամիկոնեան երկիր վերադառնալով ստանձնեց սպարապետութիւնը:

# ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՆԱԽԱՐԴԵԱՆ ՈՂՋՈՅՆ

Շարունակում է իջ 15-էն

նշխար: Իսկ յետոյ, հրապարակում վառուող կրակի շուրջ իրենց նախնիների Նաւասարդեան խրախճանքով էին արբենում: Հրաձգութեան, նշանաւորութեան խաղեր, թմբուկ էին զարկում, երգում իրենց աւանդական երգերը, պար բռնում կրակի շուրջ, իրենց հին աստուածների ըմպելիք գինի խմում, որ իրենց հոգիները Բագարանի մեհեաններ թռչէին, Արածանիի ակունքների ջրերով ցոլէին սրտերը իրենց: Արիական այս ցեղի հոգիներին տիեզերքի անսպառ կենսութի հուրն է յորդած, եւ աշխարհում ոչ մի ուժ չի կարող այն մարել...:

Խայտանքով ենք սօնախմբում Նոր Տարին, նորն էլ գալու, հէքիաթային նոր երազների իրականացման ակնկալիքներ: Իսկ ինչու հույժ մէջադի կեսարի աստղագէտները այն տարել են ցրտաշունչ Յունուարի առաջին օրը, երբ բնութեան արարման հրաշքը ցրտի սարսուռից էր դողում, արեւի ատրուշանի կրակն հանգում, ծառերը իրենց ծիածան գգեստները փռում մրսող հողին, ծաղիկները իրենց աշուկները փակում, անտառները սպիտակ հագուստ կապում, բուքը ողբաձայն մունչում, զարկում շէներին, ծովերին, ծովահարսերի անդորը խոսովում:

Արիացի մեր նախնիները մայրացած հողի բարիքների երախտաբերելու համար Նոր Տարին՝ Նաւասարդը, սօնախմբել էին Օգոստոս ամսուայ երկրորդ տասնօրեակի առաջին օրը Օգոստոսի 11ին, երբ իրենց արտերի ցորեանի ծովակները գեփիւռի շոյանքից սարսուռում էին, այգիների ծիածան կապած ծառերը ճարմանդ թեւերով՝ հողին խոնարհած պար էին գալիս, արեւ կարմիր վարսերի ժպիտն էր ցանում մարդկանց սրտերի ծովակներին՝ իր կենսութեւն յորդելու:

Շինականները, զօրքը հայոց, արքունիքը, իշխանական տները զամբուղներով մրգեր ու խուրձերով ցորեն գրկած, ծաղիկփունջերով երինջներ ու ցուլեր գուլած, սօնական երթերով գնում էին Տարօն ու Բագարեւանը գաւառների սահմանազլի սրբազան Արածանի գետի ակունքների ու Նպատ լեռան ստորոտին կառուցուած Բագարանի տաճար՝ իրենց Նաւասարդը սօնախմբելու: Արամագղի դուստր Անահիտ դիցամօրը նուիրուած՝ մայրութեան, պտղաբերութեան, բերրութեան պաշտամունքի փառաբանման տօնն էր այն:

Արեւ աստուծոյ որդիներ՝ արմէնները, լոյսի, մայրութեան հէքիաթի, բնութեան սքնաչանքի Նաւասարդեան տօների խրախճանքով էին վառում: Գողթան երգիչները մեհեաններն էին ծովացնում իրենց բանբիրների լարերի հոսած հնչիւններով, իրենց հեթանոս աստուածների ուժի փառաբանման երգերով: Անահիտ դիցամօր ոսկեծոյլ արձանի շողերի ժպիտը գրկած՝ խուրձերով ցորեն, արեւի հուրով շողուած զամբուղներով հողի բարիք էին ցանում նրա բազինին: Երինջներ ու ցուլեր էին գոհաբերում իրենց աստուածների մեհեաններում, որոնց տաք արիւնով ներկում էին իրենց դէմքերը ի նշան մաքրութեան ու նոր կենսաքի սկզբնաւորման: Հեթանոսական տիեզերական պաշտամունքով արբեցած ազնուականուհիները իրենց կուսութիւնն էին գոհաբերում սիրեցեալ քաջերին՝ արգասաւորութիւնը սրբագործելու համար: Մեհեանների հրապարակներում

հեթանոսական վայելքի արբեցումն էր թեւածու: Իրենց իմաստունների թատերգութիւնները, իրենց նահապետ Հայկի կուրը, պատերազմում ընկած իրենց Արայի կենդանացումն էին բեմականացնում: Գողթան երգիչների բանաստեղծական խօսքի ու երգի տօնահանդէսներ, Արտաշէս Արքայի բաղձանքն էին աւետում՝

Ո տայր ինձ զօնօժ ծխանի,  
Եւ գառաւօտն Նաւասարդի:

Միտանի հագած արքան էր ժողովուրդի հետ, մեհեանները գրկած նունիներ շուրջ պար էին բռնում, պայթած նուները որպէս վառուող ջահեր իրենց կարմիր լոյսն էին շողում նրանց վրայ: Հրապարակների լայն բացումը բացատրում ռազմախաղեր էին՝ նետաձգութիւն, սուսերամարտ, զօտեմարտ, որոնց յաղթողները պարմանուհիներ գրկած մտնում էին մեհեաններ՝ Աստղիկի սիրով ու իրենց երկրի հողի ուժի պաշտամունքով օծուելու: Մեհեանների քրմապետները աստուածների Նաւասարդեան պատգամներն էին փոխանցում ժողովուրդին, որ գալիք տարում անձրեւ բերէին իրենց դաշտերին, իրենց աշխարհը հեղեղէին տիեզերքի բարիքով, լոյս ու կրակ շողէին այգիներին, իրենց հոգիներում ռազմի շեփորներ պայթէին: Ուխտատեղի էր մեհեանը, նոր տարուայ ուխտ, կենսաքի փառաբանման արբեցում, աստուածների բազինները գինիով հեղեղելու:

Արմէնները հաւատում էին, որ Նաւասարդեան տօներին իրեն աստուածները՝ Մայր Անահիտը, Միհրը, Բարշամիրը, Սարտարամետը, Վահագնը, Վանատուրը, Տիրը, Նանէն, Աստղիկը, Արամագղի առաջնորդութեամբ լողանք էին ընդունում Արածանիի ու Եփրատի ջրերում, բարձրանում Արարատի, Սիփանի, Նեմրութի, Թոնտրակի գագաթներ դիտելու Նաւասարդեան խաղերը Լձինէ աստղիկներ ու նրանց ճերմակ լոյսը շողում ժողովուրդի վրայ, որ խրախճանքով արբեցած նրանց սրտերին անդորը իջնէր: Հայ, արեւի ճառագայթներին յենած ճախրի դէպի մեհեանները քու հին աստուածների, թող քու հոգին յորդի նրանց ուժի, լոյսի, կրակի, ռազմի շողերով եւ այն որպէս հայկեան ոգու հուր լցրու քու մանչերի սրտերին:

Մի իմաստուն հայ հասել է մինչեւ տասներկու հազար տարիների իր արիական ցեղի ակունքներ եւ ուրիշ իմաստուններ դեռ ինչքան հազար տարիներ պիտի գնան՝ երեւի մինչեւ Ադամ ու Եւա: Հայը դաւանելով իր «է» Աստուածը իր հոգու խորաններում շարունակում է պատարագել իր Նաւասարդը, իր Նաւասարդեան խաղերը:

Տիեզերական լոյսով վառուած հին աստուածների մեհեաններից «Յեղին Սիրտը, «Հեթանոսի Երգեր», հանապազօրեայ «Հացին Երգը» քաղած Վարուժանը՝ Նաւասարդի է գովերգել, ահա այսպէս՝

Յանձարդ Յայկեան, Նաւասարդեան սա տօներուն Արեւափառ,  
Ալ վերածնէ փլատակներէն, եւ փառագոյք քնարդ առ:  
Յանուն ուժին, յանուն գեղին, մտիր մեհեանս աստուածներուն,  
Ձաղը ձեռքիդ՝ բազմ բազմ հաճապիռէ հուր ու արիւն:  
Եւ բարձրացուր Անահիտի լանջն ի վեր բաժակղ նուր,  
Յետոյ գոհուող քերթողներուն սրտին վրայ լեցուր, լեցուր:  
Ձի մեմք, յանուն սերին, սերմին, քու հին ցեղիդ Մարմարէ կոյս,  
Մեմք գաւակներդ օգոստափառ, պիտի կերտենք նոր արշալոյս:



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:  
Proud Past, Exciting Future.*



A NEW ARMENIAN EDUCATIONAL INSTITUTION

# AGBU PASADENA HIGH SCHOOL

TO MEET THE SCHOLASTIC, DEVELOPMENTAL AND SOCIAL NEEDS OF OUR YOUTH IN PASADENA, GLENDALE, BURBANK AND SURROUNDING COMMUNITIES IN THE SAN GABRIEL VALLEY

Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School, a College Preparatory High School Serving the Greater Los Angeles Armenian Community for 30 Years.

**OPEN HOUSE AND ORIENTATION  
AUGUST 30 & SEPTEMBER 6, at 7:30 PM  
New students and their parents are welcome.**

- Enrollment open for students in Grades 9, 10 and 11 for the first year.
- First High School Graduating Senior Class in June 2008.
- Offering a challenging college preparatory academic program in a safe, caring and supportive environment.
- Armenian program to focus on the Armenian identity, culture, history and rich heritage of the Armenian people.
- Financial assistance available for qualified families.

CLASSES WILL BEGIN ON  
**TUESDAY, SEPTEMBER 12, 2006**

For further information and how to register your child, please call (626) 794-0363 or (818) 883-5379

AGBU High School - Pasadena  
2495 E. Mountain Street, Pasadena, California 91104  
www.agbuphs.org

## AGBU IN ITS SECOND CENTURY. A Centennial Symposium. "Tribute to the Past - Pathways to the Future"

Presented by:  
AGBU SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE  
In Cooperation with  
USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES  
Part of USC College of Letters, Arts & Sciences

**SATURDAY, OCTOBER 28, 2006**

9:30 AM – 3:30 PM  
University of Southern California, Town and Gown  
Figueroa and Exposition - Gate 3 Entrance  
Los Angeles, CA

**Overview of Global Activities of AGBU  
with a focus on United States and Armenia**

- The Seminar will Address:
- Organizational Structure
  - Cultural and Educational Activities
  - Sports, Youth, and Young Professionals Programs
  - New Challenges and Opportunities
  - Constituency Development

- Paper Presentations by:
- DR. H. RICHARD DEKMEJIAN**  
(USC)
  - DR. MATTHEW JENDIAN**  
(CSU Fresno)
  - DR. MIHRAN AGBABIAN**  
(President Emeritus, American University of Armenia)
  - DR. HARUTYUN ALEKSANYAN**  
(Armenian State Pedagogical University, Yerevan)
  - REV. FR. KTRIJ DEVEJIAN**  
(Mother See of Holy Etchmiadzin)
  - DR. ANI YAZEDJIAN**  
(Texas State University)
  - DR. ANI MOUGHAMIAN**  
(LA Unified School District)
  - PAMELA ABBAMONTIAN**  
(PhD Candidate, UCLA)
  - Special Guest Speaker:*  
**HON. PAUL R. IGNATIUS**  
Former

Secretary of the Navy - Under Secretary of the Army - Assistant Secretary of Defense

Complimentary breakfast, lunch and snacks will be served

**Attendance is by reservation only – Seating is limited**

Please RSVP at: AGBU Alex Manoogian Center  
(626) 794-7942 or seminar@agbuca.org

### AGBU CENTENNIAL SPONSORS

6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.

**BANK of ORANGE COUNTY** Commercial Real Estate  
Term Loans and Lines  
Free Business Checking  
High Rate Money Market

**Contact:**  
Gus Ghusayni  
Senior Vice President  
411 N. Central Avenue  
Glendale, CA 91203  
bankoforangecounty.com  
(818) 548-2720

MEMBER FDIC A Division of Placer Sierra Bank

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ԱՄՆԻ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՋԻՆ ՄՐՅԱՇԱՐԸ ԿԸ ԼԻՆԻ ԱՆԴՐԷ ԱՂԱՍԻՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

Նիւ Եորքում սկսած թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնութիւնից յետոյ յայտնի թենիսիստ Անդրէ Աղասին թողնելու է մեծ սպորտը:



36-ամեայ Աղասին ծանգամ յաղթող է ճանաչուել «Մեծ Սաղաւարտ»-ի մրցաշարերում, եւ մէկն է պատմութեան մէջ այն հինգ թենիսիստներից, որոնց յաջողուել է առնուազն մէկ անգամ նոյն տարուայ ընթացքում յաղթել «Մեծ Սաղաւարտի» բոլոր չորս մրցաշարերում (ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսայի եւ Աւստրալիայի բաց առաջնութիւններում):

Աղասին սկսել է լուրջ մրցումները մասնակցել 16 տարեկան հասակում: Նրա մարզական կարիերան փոփոխական է եղել՝ 1995 թուականին նա դարձել է աշխարհի թիւ մէկ թենիսիստը, երկու տարի անց նա գրաւել է ընդամէնը 141-րդ տեղը, սակայն 1999 թուականին կրկին նուաճել է լաւագոյնի տիտղոսը: Այժմ նա 37-րդ տեղում է:

«Չեմ պատկերացնում, թէ որքան դժուար է թողնել սպորտը, որովհետեւ նախկինում երբեք նման բան չեմ արել», - «Ֆրանսայրեն»ին ասել է Աղասին:

Երկուշաբթի գիշեր ծանր պայքարում Աղասին յաղթանակ տարաւ ոււմինացի Անդրէ Պաուելի նկատմամբ: Երկրորդ փուլում Աղասիի հակառակորդն է լինելու Մարկոս Բաղդաստիսը Կիպրոսից:

## ՐԱՅԱՍՏԱՆԻ ԱՉԳԱՅԻՆ ՐԱԻԱՔԱԿԱՆԻ ՉԼԻԱՒՈՐ ՄԱՐԶԻՉ ԵԱՆ ՊՈՐՏԵՐՖԻԼԴԸ ՍԿՍԵԼ Է ՈՒՍՈՒՄՆԱՍԱՐԶԱԿԱՆ ՐԱԻԱՔԸ

Օգոստոսի 27-ին Հայաստանի Ազգային հաւաքականի գլխավոր մարզիչ Եան Պորտերֆիլդը սկսել է Եւրօ-2008-ի որակաւորման փուլի Հայաստան-Պելզիա հանդիպման նախապատրաստութեան ուսումնամարզական հաւաքը: Այս հանդիպումը տեղի կ'ունենայ Սեպտեմբերի 6-ին, ժամը 21:00-ին՝ «Հանրապետական» մարզադաշտում:



Ինչպէս «Արմենայրեն»-ին տեղեկացրին ՀՖՖ մամուլի քարտուղարութիւնից, նոյն օրը երեկոյան Ազգային հաւաքականի մարզչական շտապի մասնակցութեամբ Եան Պորտերֆիլդը ծանօթացել է հաւաքականի թեկնածու այն ֆուտբոլիստների հետ, որոնք ներկայացնում են հայաստանեան ակումբները:

Նորանշանակ գլխավոր մարզիչը ներկայացրել է նաեւ հաւաքականի մարզումային ծրագիրը: Օրական երկու անգամ՝ առաւօտեան եւ երեկոյան, հաւաքականը նախապատրաստական մարզումներ կ'անցկացնի «Փիւնիկ» եւ «Բանանց» ակումբների մարզադաշտերի խաղադաշտերում, իսկ բուն հանդիպմանը նախորդող մարզումները կը կայանան Վազգէն Սարգսեանի անուն «Հանրապետական» մարզադաշտում: Մարզումային ծրագրի այս մօտեցումը Եան Պորտերֆիլդը պատճառաբանեց տարբեր խաղադաշտերում, տարբեր որակի խոտածածկովներին ֆուտպոլիստների ընտելանալու հանգամանքով, որպէսզի վերջիններս կարողանան ցանկացած խաղադաշտում դրսեւորել իրենց տեխնիկատակտիկական հնարաւորութիւնները:

Հայաստանի Ազգային հաւաքականի թեկնածուներ Ռոբերտ Արզումանեանը, Սամուէլ Մելքոնեանը եւ Արտաշէս Բաղդասարեանը մարզում են Հայաստանի երիտասարդական հաւաքականի կազմում, որը նոյնպէս ուսումնամարզական հաւաք է անցկացնում:

Ազգային հաւաքականի միւս թեկնածուները, որոնք հանդէս են գալիս արտասահմանեան ակումբներում, ուսումնամարզական հաւաքին կը միանան սահմանուած ժամկէտում:

## ՐԱՅԱՍՏԱՆԻ 8 ԸՄԲԻՇՆԵՐ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ԸՄԲՇԱՍԱՐՏԻ ԱՃԻԱՐԿԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆԸ

Հայաստանցի 8 ըմբիշներ կը մասնակցեն Օգոստոսի 29-ից մինչեւ Սեպտեմբերի 5-ը Գուատեմալայում կայանալիք յունահռոմէական եւ ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի երիտասարդական առաջնութեանը:

ՀՀ յունահռոմէական ոճի ըմբշամարտի երիտասարդական հաւաքականում ընդգրկուած են Խոսրով Մելիքեանը, Հրաչեայ Յովհաննիսեանը, Արսէն Զուլֆարակեանը եւ Արթիւր Շահինեանը: Թիմի գլխավոր մարզիչն է Արմէն Բաբալարեանը, մարզիչը՝ Սոկրատ Պետրոսեանը:

ՀՀ ազատ ոճի ըմբշամարտի հաւաքականի կազմում ընդգրկուած են Սուրէն Աղեանը, Խաչիկ Ամրոյեանը, Էդգար Ենոբեանը եւ Արթիւր Առաքելեանը: Թիմի գլխավոր մարզիչն է Արայիկ Բաղդասարեանը:

Հայաստանից մրցաշարը սպասարկելու է միջազգային կարգի մրցավար, յունահռոմէական ոճի ըմբշամարտի միջազգային կարգի մրցավար Սամուէլ Յարութիւնեանը:

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

### ԳԵՐՄԱՆԻՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆութպոլի առաջնութեան երրորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

- Շալքէ - Վարտըր Պրեյմըն 2-0
- ՎՖԼ Պոխում - Քոթայիս 0-1
- Շթուքկարթ - Պորուսիա Տորթմունտ 1-3
- Պայեր Լիվըրքուզըն - Վոլսպուրկ 1-0
- Յանովըր-96 - Ալըմանիա Աախըն 0-3
- Պայերն Միւնխի - Նիւրնպըրկ 0-0
- Յամպուրկ - Յերթա Պերլին 1-3
- ՖՍՎ Մայնց - Այնթրախթ Ֆրանքֆորթ 1-1
- Պորուսիա Մեոնընկլատապախ - Արմինիա Պիլըֆէլտ 1-0



Առաջատար խումբերու դասաւորումը					
Յերթա Պերլին	3	2	1	0	7-1
Նիւրնպէրկ	3	2	1	0	4-0
Շալքէ-04	3	2	1	0	4-1
Պայերն Միւնխի	3	2	1	0	4-1
Պայեր Լեւերքուզըն	3	2	0	1	5-2
Պորուսիա Մեոնընկլատապախ	3	2	0	1	3-1
Վերտըր Պրեյմըն	3	2	0	1	6-5

### ԱՆԳԼԻՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան երրորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

- Լիվըրպոլ - Ուէսթ Յամ Եունայթըտ 2-1
- Ուաթֆորտ - Մանչեսթըր Եունայթըտ 1-2
- Թոթեմհամ Յոթսփըր - Էվըրթըն 0-2
- Ուիկան Աթլէթիք - Ռիտինկ 1-0
- Ֆուլհամ - Շեֆիլտ Եունայթըտ 1-0
- Չարլթըն Էթլէթիք - Պոլթըն Ուոտերլոք 2-0
- Մանչեսթըր Սիթի - Արսենալ 1-0
- Ասթըն Վիլլա - Նիւքեմբըր Եունայթըտ 2-0
- Պլէքպըրն Ռովըրզ - Չելսի 0-2
- Միտլըքպորո - Փորսմութ 0-4



Առաջատար խումբերու դասաւորումը					
Մանչեսթըր Եունայթըտ	3	3	0	0	10-2
Փորսմութ	3	2	1	0	7-0
Ասթըն Վիլլա	3	2	1	0	5-2
Էվըրթըն	3	2	2	0	5-2
Չելսի	3	2	0	1	6-2
Ուէսթ Յամ Եունայթըտ	3	1	1	1	5-4
Լիվըրպոլ	2	1	1	0	3-2

### ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան երրորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

- Նիս - Լիոն 1-4
- Սոչօ - Փարիզ Սէն ժերմէն 3-2
- Լիլ - Պորտօ 3-0
- Թրուա - Թուլուզ 1-2
- Լորիան - Նանթ 3-1
- Նանսի - Օքսէր 1-0
- Վալանսիէ - Րընէ 3-1
- Մոնպօ - Սըտան 2-1
- Սէնթ Էթիէն - Լանս 3-2
- Մարսել - Լը Մանս 2-0



Առաջատար խումբերու դասաւորումը					
Մարսել	4	3	1	0	7-0
Լիոն	4	3	1	0	10-4
Լիլ	4	3	0	1	9-2
Նանսի	4	3	0	1	5-2
Սէնթ Էթիէն	4	3	0	1	7-5
Սոչօ	4	2	2	0	7-5
Լորիան	4	2	1	1	7-5

### ՍՊԱՆԻՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան առաջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները

- Վալենսիա - Ռէալ Պէթիս 2-1
- Եսփանիոլ - Կիմնասթիք Թարակոնա 0-1
- Օսասունա - Կեթաֆէ 0-2
- Ռէալ Մատրիտ - Վիլլաբալ 0-0
- Ռէքրեաթիւօ Յուլէվա - Մայորքա 1-1
- Աթլէթիքօ Պիլաո - Ռէալ Սոսիէտատ 1-1
- Սելթա Վիլո - Պարսելոնա 2-3
- Սեւիլլա - Լեվանթ 4-0
- Տեփորթիւօ Քորունա - Ռէալ Մարալոնա 3-2
- Ռասիլ Սանթանտեր - Աթլէթիքօ Մատրիտ 0-1



Առաջատար խումբերու դասաւորումը					
Սեւիլլա	1	1	0	0	4-0
Կեթաֆէ	1	1	0	0	2-0
Տեփորթիւօ Քորունա	1	1	0	0	3-2
Կիմնասթիք Թարակոնա	1	1	0	0	1-0
Աթլէթիքօ Մատրիտ	1	1	0	0	1-0
Պարսելոնա	1	1	0	0	3-2



ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ՄԻՈՒԹԻԻՆ  
ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ  
ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ

NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION  
GAIDZ YOUTH ORGANIZATION  
& ARMENIAN ATHLETIC ASSOCIATION

**ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ – FREE ADMISSION**

*Festival*

Armenian Independence Day

Sunday September 24, 2006

10AM - 7PM

Verdugo Park, Glendale

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՑ**

**ՓԱՌԱՏՕՆ – 2006**

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ՅԱՅՏԱԳԻՐ**



ԵՐԳ  
ՊԱՐ  
ԱՐՈՒԵՍՏԻ  
ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ  
ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ  
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ  
ՆԱՐՏԻՒ ՄՐՑԱՇԱՐՔ  
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ